

ԳԼՈՒԽ 3

ԵՆԹԱՏԵՔՍԱՅԻՆ ՇԵՐՏԵՐԸ ԴԱՐԲԵՆՈՅԱՅԻՆ ԱՇԱԿՈՒՅԹՈՒՄ

1. Դարբնի հետ կապված արխետիպերը երազներում

Դարբնության ծիսական առումների ուսումնասիրությանը վերաբերող աշխատանքում երագային սիմվոլիկային հատուկ տեղ տալը պատահական չպետք է համարել: Այն հիմնված է մի շարք դրույթների վրա, որոնք այսօրվա հասարակական գիտությունների կողմից բավականաչափ ուսումնասիրված են և համոզիչ ընդունված են կրում: Դա ամենից առաջ վերաբերում է առասպելի, երագի և հեքիաթների խորհրդանշանային արտահայտչամիջոցներում հայտնաբերված ընդհանրություններին: Նման մոտեցման պատիվը պատկանում է ավստրիացի հոգեբան Զ. Ֆրոյդին, որն առաջինն ուշադրության արժանացրեց երագային և առասպելական խորհրդանշանների միջև եղած ընդհանրություններին:¹ Չնայած այն թերություններին և սահմանափակումներին, որոնք հետագայում բացահայտեցին նրա աշակերտ-գործընկերները, դա առաջընթաց քայլ էր թե երազների և թե առասպելների ուսումնասիրության գործում: Ի տարբերություն Զ. Ֆրոյդի, որը նշված խորհրդանշանային երևույթները հանգեցնում էր անհատական հոգեբանությանը, նրա գործընկեր շվեյցարացի հոգեբան Կ. Գ. Յունգը դրանք մեկնաբանեց որպես կոլեկտիվ հոգեբանությունից ընթացող երևույթներ, որոնց արմատները հասնում են մինչև մարդկային քաղաքակրթության ամենավաղ շրջան:² Անվանելով դրանք արխետիպեր, նա դրանց նախապատճառն էր համարում կոլեկտիվ ան-

գիտակցական մոդելները (pattern): Նշենք նաև, որ երազներն ուսումնասիրության առարկա են եղել վաղեմի ժամանակներից, որի համառոտ պատմությունը տրված է Է. Ֆրոմի «The forgotten language» An introduction to the understanding of dreams, fairy tales and myths» աշխատությունում:³

Մեզ համար, անշուշտ, կարևոր նշանակություն ունեն գիտության մեջ երազների և առասպելների խորհրդանշաններին ու դրանց գուգահեռներին վերաբերող ուսումնասիրությունները: Իմ նպատակը նույնպես կարող է նույնանալ այդ խնդրի հետ և ուշադրության առարկան երազներում դարբնոցային ատրիբուտիկայի ժողովրդական մեկնաբանությունն է: Նման նպատակադրվածությունը պատճառարանվում է այն գիտական հետաքրքրությամբ, որն ուղղված է միևնույն մշակույթի սահմաններում այն կրողների վերաբերմունքին, մի կողմից, դարբնոցի հետ առնչվող ծիսական սիմվոլիկայի, մյուս կողմից, երագային սիմվոլիկայի նկատմամբ: Դա առավել հետաքրքիր է դառնում, երբ երազները, ծեսերի հետ միասին, դիտում ենք որպես մարդկային կյանքի սրբազան ոլորտի կարևոր մաս: Ծեսերը և երազները ունեն մի շարք ընդհանրություններ, որոնցից կարելի է առանձնացնել.

ա) ժամանակի և տարածության ինքնատիպ ընկալում, ինչը տարբերվում է գիտակցական, իրական ընկալումից,

բ) գիտակցականից տարբեր, դեպքերի, իրերի սուբյեկտների և օբյեկտների փոխկապակցվածության յուրահատուկ տրամաբանություն,

¹ 3. *Ֆրեյդ*, О психоанализе. - 3. *Ֆրեյդ*, Психология бессознательного, М., 1989, с. 367: 3. *Ֆրեյդ*, Введение в психоанализ, М., 1989, с. 125: երազների ուսումնասիրությանը նվիրված Զ. Ֆրոյդի՝ 3. *Ֆրեյդ*, Толкование сновидений, М., 1913, (репр. изд.), Ереван, 1990:

² К. Г. *Юнг*, Подход к Бессознательному, "Его же, Об архетипах коллективного бессознательного.

³ Э. *Фромм*, Забытый язык. Введение в науку понимания снов, сказок и мифов."

գ) իրական երևույթների նկարագրություն, բացատրություն կամ արտացոլում անիրական միջոցներով:

Հին և միջնադարյան ժամանակներում հայերն այլ ժողովուրդների մեջ բացառություն չեն կազմել և երազների նկատմամբ դրսևորել են հատուկ ուշադրություն: Եթե տեսիլքը երազի տարատեսակ համարելու լինենք, ապա դրանց մասին ցայտուն նմուշներ կարելի է գտնել հայկական վաղ ու միջնադարյան գրավոր աղբյուրներում և ավանդություններում: Չփորձելով երազների այդ նմուշները դասակարգել և վերլուծել, կցանկանայինք դրանցում առանձնացնել մի կարևոր տարր: Երազը դիտվում է որպես իրական կյանքի հետ կապված և դրա անցյալը, ներկան ու ապագան տարածա-ժամանակային մեկ կետում ամբողջացնող սրբազան ուղորտ: Այն հաճախ դիտվում է որպես աստվածային իմաստության հետ հաղորդակցման ուղորտ, որի միջոցով հաղորդվում են մարգարեություններ⁴: Պետք է ասել, որ երազների նշված տիպում, որպես կանոն, գործում են ունիվերսալ խորհրդանշաններ, որոնք կապվում են արխետիպերի երազային դրսևորումների հետ:⁵

Ուսումնասիրության համար ունեցել ենք երեք աղբյուր.

ա) հայկական միջավայրում տարածված գտած երազահաններից դուրս գրված նյութերը⁶,

բ) դաշտային հետազոտությունների ընթացքում կենդանի գուշակ երազահանների մեկնությունները,⁷

⁴ Երազների մասն նշանակությունը դժվար է տեսնել ժողովրդական էպոսում, ավանդապատումներում և այսօրվա երազահան գուշակների բացատրություններում: Տես *Սասունցի Դավիթ*, էջ 23, 26, 66, 129, 185, 226, 252, 273: *Ա. Ղանալանյան*, նշվ. աշխ., էջ 102, 215, 222-223, 225, 227, *Ա. Թադևոսյան*, ԴԱՆ, տ. 3, էջ 4-38:

⁵ *Э. Фромм*, Забытый язык, с. 184: Առասպելների, հեքիաթների և երազների ընդհանրությունների մասին տես նաև *E. Cassirer*, op. cit., p. 36; *D. MacLagan*, op. cit., p. 12; *G. I. Kirk*, op. cit., p. 252-257:

⁶ Մեր օգտագործած երազահանները երկուսն են՝ *Կիլիկեցի*, ընդարձակ երազահան կամ ընտանիքի ռարեկամ, Պեյրուք, 1907: Մյուս երազահանը, ցավոք, գտնվում էր չափազանց վատ վիճակում և հրապարակության վայրն ու թիվը չկարողացանք պարզել: Երազահանն ինձ տրամադրեց ազգագրագետ Ա. Խաչատրյանը, ում հայտնում եմ իմ երախտագիտությունը:

⁷ *Ա. Թադևոսյան*, ԴԱՆ, տ. 3, էջ 7-10:

գ) Ազաթանգեղոսի երկի վերն արդեն հիշատակված տեսիլքը:⁸

Դարբնոցային, ասորիբուտիկայի մեկնությունը երազահաններում: Ուսումնասիրության այս մասն իրականացնելու համար օգտվել ենք հիմնականում երկու երազահանից:⁹ Դրանցում, բացի դարբնոցային ասորիբուտներից, ընտրել ենք այն առարկաների և երևույթների բացատրությունները, որոնք հանդիպեցին վերը քննարկված ծեսերում ու որն էլ ներկայացնում ենք այստեղ.

Դարբին տեսնել - մեծ մաղդու կողմից ճնշման սպասում:

Դարբին լինել - պաշտոնի բարձրացում, պատիվ և վաստակ:¹⁰

Օղ - սիրային հարաբերություն:

Օղակ շինել - ամուսնության միջնորդություն:

Մատանի - իշխանություն, պատիվ:

Մատանին իբրև ընծա ընդունել - կնշանակի, որ ձեզ սիրող կա:

Արեգակի խավարում - կանխանշան մեծ վտանգի:

Արեգակ պայծառ - մեծ հաջողություն և պատիվ:

Արեգակ արեմագույն - երկրի նկատմամբ չարիքի նշան:

Արևի ծագում - մանչ զավակ պիտի ունենաս:

Կայծակ - մեծից պետք է հանդիմանվես և վշտանաս:

Ապարանջան - ուրախություն և երջանկություն է:

Ծախսելը - կործանում, վնաս, ծանր հիվանդություն:

Աչք - սիրոյ զգացմունքդ պիտի շատանայ:

Հանել - սերդ պիտի խափանի ու պիտի վշտանաս:

Գիշեր - մութ գիշերը վիշտ ու տխրություն է:

⁸ *Ազաթանգեղոս*, նշվ. աշխ., էջ 413-427:

⁹ Հիմնական աղբյուրը ծառայել է Կիլիկեցու երազահանը: Երկրորդ երազահանը ծառայել է որպես համեմատության և լրացումների միջոց: Բերված նյութերը տես *Կիլիկեցի*, նշվ. աշխ., էջ 2, 3, 6, 8-10, 16, 19, 33-34, 55, 80, 101, 137, 155:

¹⁰ Միջնադարում երազում դարբին տեսնելը հայերը համարել են հաջողության նշան՝ տես *Վ. Աբրահամյան*, նշվ. աշխ., էջ 44, 46:

Եթե գիշերն առավոտ կարծելով, արևու ծաղկումը տեսնեք, ձեր ամբողջ վափազներուն և հույսերուն պիտի հասնեք:

Գիշերվա մութի հանկարծանի լուսանալը տեսնելը կնշանակե ձեր վիշտերն ու տխրությունը պիտի փարատվի, աղքատ եք՝ կհարստանաք, թշնամի եք՝ կբարեկամանաք, բարկացած եք՝ կհանգստանաք:

Գետ - երբ կողմդ կը հոսի, հաջողություն է:

Անցնելը - դժբախտություն կը հաղթես:

Իյնալը - անակընկալ բարիք կը գտնես:

Պղտոր - տեղական, հանրային չափի մշան:

Երկաթ - գետ և ծով մտնել է, զգուշացի:

Երկաթագործություն անել - երկար ժամանակ հետապնդած գործդ պիտի հաջողի
Երկինք պարզ - հաջողություն է,
կարմրած - աղքատություն է, սով և մեծ վիշտ,

Երկինք ելնել - մեծ պատիվ է:

Երկիր - մշան է գեղեցիկ և առաքինի կին ունենալու:

Որպես զուգահեռ մի քանի օբիեկտներ բերեմք մաև այլ ժողովուրդների երազահաններից՝

Դարբնոց - բարի մշան, առողջություն, հաջողություն:

Մուրճ - աշխատանք, պայքար և գործերուն հաջողություն:

Կայծակ - անասելի հաջողություն, ուրախություն:

Ջնդան - առողջություն և հաջողություն:

Ամպրոպի ուժեղ հարված - ցանկությունների իրականացում:¹¹

Ամպրոպ - իրադրության լավացում՝ անսպասելի և արագ ձևով:

Երկաթ կռել - բախտավորություն և երջանկություն:

Սեխ մեխել - ճիշտ որոշում:

Սեխ գտնել - երջանկություն:¹²

Ինչպես տեսնում ենք, բավականին մանություններ կան հայկական միջավայրում տարածում գտած և եվրոպական ու սլավոնական երազահանների մեկնությունների միջև:

Դարբնոցային ատրիբուտիկայի երազային մեկնությունները ըստ ժողովրդական գուշակների: Այս նյութերը հավաքվել են

դաշտային հետազոտությունների ընթացքում: Մռաջին մասում կներկայացնենք երազային խորհրդանիշների ժողովրդական մեկնությունները ստատիկ առումով:

Մուրճ - երբ ֆո ձեռքին է, հաղթանակը քոնն է, երբ ուրիշի՝ նրանը: Անկնվում է մաև անհրաժեշտ է զգուշ լինել, բայց հաղթանակ է:

Մատանի լինել - հարստանալու, հաջողության և ամուսնության մշան է:

Կայծակ - երկրին մեծ նեղություն է:

Անձրև - անուշ խոսք:

Ամպրոպ - անհույս լուր:

Դարբին լինել - պատվի և հաջողության մշան:

Դարբինը հարվածում է զնդանին - լավ լուր է սպասվում:

Դարբնոց - հաջողության մշան է, լավ փոփոխություն կյանքում:

Աղբյուրի ակն (ակունք) - շնորհք Ջորության կողմից:

Ջնդան - հաջողություն, հարստություն:

Կայծքար - անհույս հիվանդի լավացման ձայն կլսես:

Օձ - թշնամին ծոցումդ է:

Օձը մահճիդ մեջ սպանվելը - կինդ կմեռնի:¹³

Դարբնոցային ատրիբուտների դիմամիկ վիճակում մեկնությանը ծանոթանալու համար դիմեցինք մի փոքր խորամանկության: Տարբեր գյուղերում երազ գուշակող կանանց, որպես սեփական երազ խնդրում էինք մեկնաբանել միևնույն, հորինված պատմությունը: Աստիճաններ կայացնում ենք որպես երազ ներկայացված պատմությունը և այդ առթիվ երկու երազահան կանանց մեկնությունները:¹⁴

Պատմություն - երազ. Ակզբում միայն դարբնոցն էր, որտեղ գնդանի մոտ դարբինը ինչ-որ բան էր պատրաստում: Հետո չգիտես ինչպես եղավ, և ես հայտնվեցի դարբնոցում: Երբ ես որջունեցի դարբնին, մա ինձ այնպես բարեց, կածես թե մենք վարուց իրար ճանաչում էինք: Այդտեղ ես նկատեցի, որ դարբինը սուր է պատրաստում: Երբ մա վերջացրեց աշխատանքը, փորձեց սալրի սրությունը: Ես

¹¹ *Муссы-Хоссе*, Сон и сновидение, М., 1910 (пер. изд.) М., 1990, сс. 36, 40, 42, 44:

¹² *Сонник*, (составитель Е. Цветков), М., 1989, сс. 19-20, 38:

¹³ Բերվածը տես՝ *Ա. Թադևոսյան*, ԻՄՍ, տ. 3, էջ 7:

շատ հավանեցի այն և գովեցի: Վարպետը բարեկամաբար ինձ նայելով՝ ասաց, որ այն ինձ է նվիրում:

Մեկնություն 1-ին. Դարբնոց տեսնելը մեծ հաջողություն է, իսկ զնդանին հարվածելը ցույց է տալիս, որ լավ լուր ունես ստանալու, որից հետո մի որոշում կընդունես ու դրանից շատ կշահես: Բռնաժող գործը մեծ օգուտ է բերելու: Ձեռքդ սուր են տվել, ուրեմն հաղթանակը քոնն է: Այնպես որ, ինչ գործ նախատեսել ես, սկսի, բարեհաջող կլինի:

Մեկնություն 2-րդ. Ձնդանին հարվածելը լավ լուր ստանալու նշան է: Դարբինը, ընդհանրապես, հաջողություն է, հարստացում, լավ աշխատանք և նախաձեռնած գործի իրականացում: Եթե դարբինը սուր է պատրաստում, պետք է զգույշ լինես, կարող է վնաս կրես, բայց եթե այն քեզ համար է, կարող ես չվախենալ: Սուրը քո ձեռքում գորություն է, ուժ, հաղթանակ: Գործերիդ հաջողություն է սպասում:

Երազահանների, ժողովիդական գուշակների մեկնություններում նկատելի են ընդհանրություններ վերը քննարկված ծեսերի խորհրդանշային ենթատեքստում շոշափված թեմաների հետ: Երազներում դարբնի, դարբնոցի, երկաթի, երկաթ կռելու, զնդանի, մուրճի հետ կապված գուշակությունները կարծես թե ծագել են դրանց ծիսական խորհրդանշանային իմաստից կամ հակառակը: Ծեսերում հանդիպած այլ երևույթների խորհրդանշանային իմաստը նույնպես խիստ համապատասխանություն ունի դրանց երազային արտահայտությունների մեկնության հետ: Բերենք դրանցից ամենարճարունը: Երազում արևի ծագելը դիտվում է որպես մանչ զավակ ունենալու նշան: Ծեսում նույն երևույթը հաջող ծնունդի գրավական է: Արեմագույն արեգակ կամ իսավարող արև երազում տեսնելը բացատրվում է որպես երկրին սպառնացող արհավիրքի նշան: Ծեսում կամ առասպելում արեգակի իսավարումը կապվում է կարգախափան վիշապի ակտիվացման հետ: Երազում օդ պատրաստելը նշանակում է ամուսնության միջնորդություն: Նույն իմաստը ռացիալայնաց նաև ծեսում: Երազում և ծեսում մուրճը նշում է հաղթանակը: Երկիրը երազում առաքինի և գեղեցիկ կին է նշանակում: Նույն նշանակություն

ունի այն նաև առասպելական այլաբանության մեջ: Երկաթ տեսնելը նշանակում է գետ և ծով մտնել, որից, սակայն, պետք է զգուշանալ: Այստեղ, կարծես, արտահայտված է միաման գործողության հետ կապված երկաթի ծիսական խորհրդանշանային իմաստավորումը: Նման ձևով կարելի է բերված յուրաքանչյուր իրի կամ երևույթի երազային մեկնության և ծիսական խորհրդանշանային կամ առասպելական այլաբանական իմաստավորումների միջև ցույց տալ ընդհանրություններ, որոնք մեր նյութում ակնհայտ են: Ասվածը վերաբերվում է երազային սիմվոլիկայի ստատիկ և դինամիկ վիճակներին: Մենք մեկ ամգամ ևս կանգնում ենք գիտության մեջ արդեն բացահայտված փաստի առջև: Հաճելիորեն գարմանում ենք, որ ծիսական խորհրդանշաններում թաքնված նախնական աշխարհընկալման տարրերը միանգամայն տարբերային ձևով մեզ են ներկայանում երազային ոլորտում: Դրանց մեջ եղած ընդհանրությունը թույլ է տալիս համոզվելու, որ դրանք սնող մարդկային հոգեբանության արմատները նույնն են:

Դրանք արխետիպերն են,¹⁵ որոնք մարդկային ներկայիս կեցությամբ և մտավոր գործունեությամբ նախորդող ժամանակաշրջանում մտածողությունը սնող կենդանի մեխանիզմներ էին: Հնարավոր է, որ դրանց ենթագիտակցական ոլորտ անցնելը կապված

¹⁵ Արխետիպ տերմինի առաջին գիտական կիրառողը Կ. Գ. Յունգն էր: Նա այդպես անվանեց երազային խորհրդանշանների, առասպելական թեմաների և կոլեկտիվ կերպարների հիմքը կազմող երևույթը: Կարելի է ինչ-որ մասնություն տեսնել դրանց և Ֆրոյդի բնորոշած «արխայիկ վերապրուկների» սրջն. որոնք նա համարում էր մարդկային հոգեբանության, անհատական կյանքից դուրս, արմատական, սկզբնական և ժառանգական ձևեր Տես *3. Փրոյդ*, Введение в психоанализ, с. 125: Յունգն արխետիպի հիմքում դնելով աշխարհընկալման կոլեկտիվ ձևերը, դա համարեց բնագոյների մասնաբաժնի հոգեբանության մեջ ի ծնե և ժառանգականորեն դրված: Նա գտավ, որ արխետիպերը, ունենալով իրենց սեփական էներգիան, ունեն նաև «նախաձեռնություն»՝ մասնակցելու տարրեր իրավիճակների սեփական իմպուլսների և մտածողության ձևերի միջոցով, գործելով որպես համակարգ: Որպես աուտոսոփ. արխետիպերը կարող են ստեղծել առասպելներ, փիլիսոփայական համակարգեր, որպես բնությունից առանձնանալու հետևանքով մարդու կրած կորստի փոխհատուցում: Այլ երազային խորհրդանշաններն են կրում մեր նախնական էությունը, բնագոյները և ուրույն մտածելակերպը: Տես *Կ. Գ. Յունգ*, Подход к бессознательному, с. 63-76. *Его же*, Об архетипах коллективного бессознательного, сс. 97-100:

¹⁴ *Անդ*, տ. 3, էջ 43-44, 63:

է րնությունից մարդու առանձնացման հետևանքով մտածողության և հոգեբանության մեջ կատարված այն ճեղքվածքի հետ, որի արդյունքում ոգեղենության և նյութականության նախնական սինկրետիզմը տարանջատվեց: Դրան համապատասխան, մարդկային մտածողության մեջ նյութականացվածության ղեկավարումն ստանձնեց գիտակցությունը, ոգեղենությամբ՝ ենթագիտակցությունը կամ խորհրդանշանների աշխարհը: Այս ամենից ելնելով, չի կարելի չհամաձայնել Կ. Գ. Յունգի այն մտքի՝ հետ, որ երազների խորհրդանշանային վերարտադրողական գործառույթը մի փորձ է՝ հարմարեցնելու հնամենի մարդու հոգեբանությունն առաջադիմած և տարարաժանված գիտակցությամբ, որտեղ այն նախկինում երբեք չի եղել, ուստի և երբեք չի ենթարկվել քննադատական ինքնաճանաչման, որովհետև հեռու անցյալում նախնական մարդու հոգեբանությունը ներկայացրել է մարդու ամբողջական անձը: Իր զարգացման գործընթացում գիտակցությունը կորցրել է կապն այդ պարզունակ հոգեկան ներուժի մի մասի հետ: Եվ երբեք նա չի իմացել այդ նախնական հոգեբանության մասին, քանի որ այն դեռ է նետվել զարգացման և տարարաշխման գործընթացում: Բայց, այդուհանդերձ, գիտակցությունը միակն է, որ կարող է դա հասկանալ և թվում է նաև, որ այն, ինչ անվսնփում ենք անգիտակցական, պահպանել է հնամենի հոգեբանության մի մասը կազմող պարզունակ գծերը: Եվ հենց դրանք են մշտապես դիմում երազային խորհրդանշաններին:¹⁶

Երազի ուերի ժողովրդական բացատրությունում էլ այն դիտվում է որպես սրբազան աշխարհի հետ ի վերուստ տրված հաղորդակցման ձև: Ըստ ժողովրդական հավատալիքի, երազը խաչի գործության կրողն է: Խաչի գործությունը ճակատագիրն է և ինչպես մարդ չի կարող խուսափել խաչի գործությունից, այնպես էլ չի կարող խուսափել երազից: Խաչի գործությունը մարդուն միայն երազում է հայտնվում: Որպեսզի երազն իրականանա կամ չիրականանա, անհրաժեշտ է հանուն Աստծո մոմ վառել:¹⁷ Բանասացներից մեկ ուրիշ խոսքերով, սրբերի հետ մարդու հաղորդակց-

ման միջոցը երազներն են:¹⁸ Հայերը երազները համարում են գործունեության գերբնական, սրբազան ուրուտ, ինչպիսին և ծեսն է: Ուստի երկուսն էլ բնորոշվում են իրենց հաղորդակցման միջոցների՝ խորհրդանշանների իմաստաբանության և սրբազան աշխարհի օրենքների ընդհանրությամբ, որոնց համակարգում դարբնի հետ կապված ատրիբուտներն ունեն ուրույն մեկնաբանում:

2. Դարբնոցային սարքավորումների և հիմնական գործընթացների լեզվական սեմանտիկան

Դարբնության խորհրդանշանային համակարգի ուսումնասիրությունը սերտ առնչություն ունի լեզվային նշանային ուրուտի հետ: Լեզվի, որպես նշանային համակարգի, սոցիալական ընդհանրության մեջ վաղուց արդեն ընդունված և հիմնարար դրույթներից է:¹⁹ Ավելի ուշ լեզվի այդ հատկանիշը, որպես ուսումնասիրության միջոց սկսեց կիրառվել նաև մշակույթի ուսումնասիրության մեջ: Դա հնարավորություն տվեց բացահայտելու լեզվական և մշակութային այլ նշանների իմաստային և գործառնական մի շարք ընդհանրություններ:²⁰ Վերջինս էլ հիմք է ծառայում մշակույթի ուսումնասիրության ուրուտում օգտագործելու լեզվական նշանային տվյալները մշակութային նշանների իմաստային վերականգման համար:²¹

Դարբնոցային սարքավորումների և հիմնական գործընթացների անվանումների դիտարկումը հանգեցրեց մի շարք հետևությունների:

ա) այն առասպելական թեմաները, որոնք հաջողվեց բացահայտել ծեսերի խորհրդանշանային սյուժեներում, հիմնական գծերով

¹⁸ Ա. Թադևոսյան, ԴԱՆ, տ. 3, էջ 65: Այլ ժողովուրդների մեջ նշված երևույթի մասին տես. Յ. Բրոյն, *Забывший язык*, с. 229: А. П. Рудин, указ. соч., с. 146: G. I. Kirk, op. cit., p. 272: M. Eliade, *Myth, dreams and mysteries*, p. 116:

¹⁹ Դրա լեզվաբանական բացահայտման պատիվը պատկանում է Ֆ. դե Սոսյուրին տես Փ. Դե Սոսյուր, *Замечки об общем лингвистике*, сс. 9, 34-39, 66 և այլն:

²⁰ Այս առումով առավել արժեքավոր աշխատությունների թվում կարելի է նշել հետևյալները՝ Յ. Բենвениստ, *Общая лингвистика*; Р. Якобсон, *Роль лингвистических показаний в сравнительной мифологии*.

²¹ К. Леви-Стросс, указ. соч., сс. 33-90:

¹⁶ К. Г. Юнг, *Подход к бессознательному*, с. 84-91:

¹⁷ Ա. Թադևոսյան, ԴԱՆ, տ. 3, էջ 5:

գուգահեռ են լեզվական նշանային իմաստներին:

բ) թե՛ ծիսական և թե լեզվական նշանները կառուցված են աշխարհընկալման ընդհանուր հիմքի վրա և դրանց գուգորդումը կազմում է լեզվական նշանների ոլորտում առասպելը, առարկայական-տեսողական նշանների ոլորտում՝ ծեսը:

գ) լեզվական նշաններում բացահայտվում են ծիսական խորհրդանշանների և գործողությունների առանձին ենթաիմաստներ, որոնք ծեսի նշաններում մեզ չեն հասել:

Ատորը բերում ենք առավել նշանակալից բառերի արմատների ստուգարանությունը:

Յուր - համարվում է բնիկ հնիս. բառ, որը ցեղակից հնդեվրոպական լեզուներում ունի «արեգակ, օր, լույս» իմաստները:²² ունի նաև *հուլ* ձևը, որից էլ հնոց՝ կրակաբան բառն է կազմված:²³ Հայերեն *կրակ* բառը նույնպես ունի հնդեվրոպական ծագում և համազոր է *հուր* բառին:²⁴ Մի շարք հնդեվրոպական լեզուներում այդ արմատից կազմվում են *դարբին* և դարբնոցային *հնոց* բառերը:²⁵ Արմատային ընդհանրություն կա նաև նշվածի և հայերեն *արեգակ* բառի միջև, որը նշանակելով արևի աչք, Արեգի աչք, լույսի ակն (ադբյուր) գուգահեռ է հնդեվրոպական համապատասխան արմատից կազմված բառերին և, հնարավոր է, նաև խեթերեն *har(u)uana-*«լուսանալ» բառին:²⁶ Այդ արմատից կազմված բառերը հնդեվրոպական տառերը լեզուներում ունեն նաև «կարմիր, արյուն, շեկ, ժանգ, մետաղ, բով, հանք» իմաստները:²⁷

Կայծ - բառի դիմաց ՆԲՀ-ում կարելի է կարդալ՝ «կայծագույն կամ հրագույն ակն պատուական: Մասնիկ հրոց փայլուն և դյուրաշեջ»: Իսկ կայծակը, որպես «շանթ, հուր, կամ լույս փայլատակելու: Շանթ երկնառաք, ի վայր բերելու կոչի կայծակն»:²⁸ Հր. Աճառյանն այն մեկնում է որպես կրակի պեծ, կրակ,

երկնային լույս:²⁹ Այս արմատով կազմված որոշ հայերեն բառերում նկատելի է կայծակի և դարբնի, հրո և պողպատի միջև ծիսական խորհրդանշաններում վերը բացահայտված իմաստային առնչակցությունը: Կայծակնահարել բառը բացատրվում է՝ «հարմամբ որպես կայծքարի ընդ պողպատ հուր բորբոքել, կամ որպես շանթիվ հարկանել ի հրդեհել», իսկ կայծակնավար բառը «որ վարել գայծակունս որպես դարբին և գործիք նորա. գճեփեստոս ասեն կադյերկոտունց ոտիցն և կայծակնավարս ունի, ի ձեռնն աքցանս և կոանս և նստեալ դարբնէ մաղդկանց»:³⁰

Փուքսից դուքս եկող օդը հայերեն նշվում է հատուկ բառով՝ փուք, որը նշանակում է նաև «փորի քամի», «Փչած շունչ. օդի շարժում»:³¹ Արմատը *Phu* կամ *hu* հնդեվրոպական բնածայնն է,³² որից ծագում են *հալ*, *փուլ*, *հոգի*, *ոգի* բառերը:³³ Հնդեվրոպական լեզուներում նույնպես շունչ, քամի, հոգի բառերն ունեն ընդհանուր ծագում, իսկ «շնչի» իմաստով օգտագործված քամին ձեռք է բերում սբբագանի իմաստ,³⁴ օդ ու քամի բառերի նշված սեմանտիկան բնորոշ է նաև Կուրդալագոն դարբնի անվանը,³⁵ օսական և սկյութական համապատասխան բառարմատներին:³⁶ Այսպիսով, հնդեվրոպական լեզվական սեմանտիկայում նկատվող քամու իմաստը որպես աստծո շունչ, համապատասխանում է հնդեվրոպական դիցաբանում քամու և ամպրուպի աստծո գրադեցբած դիրքին՝ որպես ամեն ինչի սկզբնավորողի:³⁷ Լեզվական նման սեմանտիկա է գործում նաև սեմական լեզուներում:³⁸

Ջուր - համարվում է բնիկ հայերեն բառ, հնդեվրոպական արմատով, որը նախալեզվում ունի երկու ձև: Դրանցով կազմված բա-

²² Հր. Աճառյան, հ. 3, էջ 126; В. И. Абев, Осетинский язык и фольклор, ч. 1, М.-А., 1949, сс. 168, 190. *Его же*, Дохристианская религия Алан, М., с. 10:

²³ Հր. Աճառյան, հ. 3, էջ 106:

²⁴ В. И. Абев, Скифо-европейские изогласи, 1965, сс. 23. Հր. Աճառյան, հ. 2, էջ 679:

²⁵ *Там же*.

²⁶ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ, соч., т. 2, с. 684:

²⁷ Հր. Աճառյան, հ. 1, էջ 312:

²⁸ ՆԴԲ, հ. 1, էջ 1045:

²⁹ Հր. Աճառյան, հ. 2, էջ 506:

³⁰ ՆԴԲ, հ. 2, էջ 959:

³¹ Հր. Աճառյան, հ. 4, էջ 529; ՆԴԲ, հ. 2, էջ 959:

³² Հր. Աճառյան, հ. 4, էջ 529; Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ, соч., т. 2, с. 677:

³³ Հր. Աճառյան, հ. 4 էջ 529:

³⁴ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ, соч., т. 2, сс. 466, 678:

³⁵ В. И. Абев, Дохристианские религии Алан, с. 7; *Его же*, Скифо-европейские изогласи, с. 28:

³⁶ В. И. Абев, Осетинский язык и фольклор, с. 174:

³⁷ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ, соч., т. 2, сс. 677 - 678:

³⁸ *Пятиязычные Моисеево или Тора; Брейшит*, сс. 22-23:

ռերը հնդեվրոպական լեզուներում ունեն «ջուր, անձրև, լիճ, ծով» իմաստները:³⁹

Երկաթ - փոխառություն է՝ կազմված *rk* - արմատից: Ըստ Զր. Աճառյանի, մի շարք լեզուներում այդ արմատից են կազմված արեգակ, երկինք, երկնականար բառերը:⁴⁰ Ըստ Վյաչ. Իվանովի, այն հնդեվրոպացիների փոխառել են հեթեթերենից, որն էլ այն ժառանգել է հաթերենից (նախահեթեթական քաղաքակրթություն):⁴¹ Առտավորապես նման ժառանգականությունը տրվում է *երկաթ* բառին նաև սեմական լեզուներում:⁴² Հայերեն *երկաթ* բառն ունի նաև սուր գործիքի, կապանքի և շղթայի նշանակություն: Նոր Հայկազյան բառգրքում հանդիպում է հետևյալ մեկնաբանությունը «Հանք թխագույն՝ ժանգափար, կարծր և տոկուն, որ զամեամյն պնդութի նվաճի և ինքն հրով և եթ նվաճվի»:⁴³

Աքցան - ատրուշեկ երկաթը հնոցից դուրս քաշելու գործիք, մեխ քաշելու գործիք, հնդեվրոպական բարբառներում ունի «ոտք, ծռել» իմաստները, իսկ արաբերենից փոխառված *Kelpetin* նշանակում է «զույգ շներ»:⁴⁴ Հայերեն գործածական է նաև «ունելիք» ձևը, որը ՆԲՀ-ում բացատրվում է որպես «բազմակալ ճրագոյ: Ի ձեռին իւրում ունէր կայծակն, զոր առեալ ունելիոք ի սեղանց անտի»:⁴⁵

Փուլք - Կրակ օդի միջոցով հրահրել, շիկացնելու գործիքն է, նշանակում է նաև նվազելու տիկ»:⁴⁶ ունի բարբառային փուկ, փեօք, փակ, փյեակ, փիւս, փոկս ձևերը:⁴⁷ Կազմված է *փուլք* բառից, որի ծանոթությունը տրվել է վերը:

Սալ - նշանակում է տափակ քարի մեծ հատոր, մետաղի մեծ կտոր: Ունի նաև երկաթի կոճղի նշանակություն, որի վրա դարբինը երկաթ է ծեծում: Նոր Բայազետում *սալ* է անվանվում դարբնի զնդանի տակի հենարանը: Բառն

ունի հնդեվրոպական ծագում:⁴⁸ ՆՀԲ-ում տրվում է հետևյալ բացատրությունը «հատոր կամ տափարակ երկաթի կամ քարեղեն, որոյ վրա կռանեն դարբինը»:⁴⁹ Գործածական է նաև պարսկերենից «զնդան» փոխառությունը, որը նշանակում է ստորերկրյա մութ բանտ, մութ տեղ:⁵⁰

Կռան - դարբնի մեծ մուրճ, գործիք կռելու: Նաև՝ ջրադացի մաս: Արմատը համարվում է իալդյան կամ կովկասյան փոխառություն:⁵¹ Գործածական է նաև «ուռն» ձևը, որով նշվում է և՛ կռանը, և՛ մուրճը: Մի շարք լեզվաբաններ այն մոտեցնում են սամսկրիտի արմատին, որն ունի «հարվածել, վիրավորել, սպանել, զարնել» իմաստները և զենդերեն *զենք* բառի հետ:⁵² Նշվածը կարելի է նկատել ՆՀԲ-ում վկայաբերված հետևյալ նախադասությունում «Ուռնավոր հրեշտակն եհար զսատանայ»:⁵³ Ինչպես տեսնում ենք, այստեղ սատանա-հրեշտակ հակամարտությունում *ուռնը* հրեշտակին զենք է ծառայում:

Կրակը վառելու գործողությունը դարբնոցային գործընթացների հերթականության մեջ առաջինն է: Այն կազմված է *var* արմատից, որը հնդեվրոպական մի շարք լեզուներում կազմում է *պրիմ* բառի արմատը: Նույն արմատով կազմվում է նաև *եփել* բառը:⁵⁴ Հայերեն *վառ* արմատն ունի նաև «զինելու, զենքի» իմաստ:⁵⁵

Կռել - բառը նշանակում է «ծեծել, մետաղը ծեծելով բանել, դարբնել, հաստատել, դնել (դաշինք)»:⁵⁶ Արմատը կազմում է կուռ բառը, որն ունի «կարծր, կոփած, տրորած, նաև մեջք, թիկունք, քամակ» իմաստները: Նույն արմատից է կազմված նաև *կուռք* բառը, որը նշանակում է արձան և անշարժ:⁵⁷ Այն համարվում է փոխառություն: Խալդյան և կովկասյան լեզուներում ունի «ծեծել, մտրակել, զարնել,

³⁹ Զր. Աճառյան, հ. 3, էջ 26; Դ. Բ. Գամկրալիձե, Բ. Բ. Իվանով, указ., соч., т. 2, сс. 671-673:

⁴⁰ Զր. Աճառյան, հ. 1, էջ 688:

⁴¹ Բ. Բ. Իվանով, История славянских и балканских названий металлов, М., 1983, сс. 44, 49:

⁴² Ю. П. Вартанов, Происхождение семитских названий металлов, Древний Восток, Ереван, 1983, сс. 91-96:

⁴³ ՆՀԲ, հ. 1, էջ 688:

⁴⁴ Զր. Աճառյան, հ. 1, էջ 371:

⁴⁵ ՆՀԲ, հ. 1, էջ 598:

⁴⁶ Զր. Աճառյան, հ. 4, էջ 529, ՆՀԲ, հ. 2, էջ 959:

⁴⁷ Աճռ, էջ 529:

⁴⁸ Աճռ, էջ 155:

⁴⁹ ՆՀԲ, հ. 2, էջ 685:

⁵⁰ Զր. Աճառյան, հ. 2, էջ 102: ՆՀԲ, հ. 1, էջ 740:

⁵¹ Աճռ, էջ 662:

⁵² Զր. Աճառյան, հ. 3, էջ 609:

⁵³ ՆՀԲ, հ. 2, էջ 554:

⁵⁴ Բ. Բ. Իվանով, История славянских и балканских названий металлов, с. 105: Նման սեմանտիկա կարելի է տեսնել նաև սեմական մի արք լեզուներում, Ю. П. Вартанов, указ., соч., сс. 85-87:

⁵⁵ Զր. Աճառյան, հ. 4, էջ 308

⁵⁶ Աճռ, հ. 2, էջ 662:

⁵⁷ Աճռ: ՆՀԲ, հ. 1, էջ 1123:

բանտարկել, մուրճ, ուժգին բախել, շրմել, ամ-
րացնել, միացնել» իմաստները:⁵⁸

Կուփել - կազմված է հնդեվրոպական ար-
մատից: Նշանակում է «տաշելով մի բան շի-
նելու արհեստ, բուռն հարված: Կռանով, մուր-
ճով զարկել, ծեծել: Փայտի, քարի, մետաղի
վրա աշխատել, կռել: Ըմբռնարարության մեջ
իրար զարնել: Արով զարնել: Ապանել: Հնդեվ-
րոպերենում արմատը ստանում է ծեծել, ման-
րել, փորել, փորագրել, կտրել, հանել, ընդօրի-
նակել:⁵⁹ Կարելի է մերժեցնել հնդեվրոպական
kṛhjaHu ձևին, որը kovo, eudo, kauju, ko, kou և
այլ արտահայտություններում ստանում է
խփել, հարվածել, սպանել» իմաստները:⁶⁰

Մխել - բառի արմատը «մուխ»-ն է: Այն
բնիկ հայերեն բառ է: Նշանակում է «մի բանի
մեջ իրել, խոթել», կաթօրացնել «երկաթը
ջրելու համար տաք-տաք ջրի մեջ մխելը և
այս գործողությամբ առաջացած կարծրու-
թյունը: Մխած՝ նշանակում է ջրած երկաթ»: Հա-
յերենում և հնդեվրոպական այլ լեզուներում
ունի նաև «ծուխ, կրակ, շոգի, ամբողջ կրակ» ի-
մաստները:⁶¹ ՆՀԲ-ում մուխը մեկնվում է որպես
կրակ դարձած «Ջամենայն մետս մուխս չարին
շիջուցանել» (մետերը կրակ դարձած չարին
վառում էին):⁶²

Դարբին - բառի հնդեվրոպական արմատի
նախնական ձևը կորսված է: Դա կապվում է
արհեստի սրբազանության և այն նշող բառի
տաբուազման հետ:⁶³ Հը. Աճառյանը հայերեն

դարբին բառը մեկնում է որպես հնդեվրոպա-
կան dhabhro նախածնից *իմ* մասնիկի հավել-
մամբ կազմված բառ:⁶⁴ Հայերենում բուն ի-
մաստն է՝ *վարպետ, արհեստավոր*: Ունի բար-
բառային *դարփին, տարպին, դառփին. դար-
պեն, դարփուն* ձևերը: Այլ հնդեվրոպական
լեզուներում արմատն ունի *վարպետ. արհես-
տավոր, պատրաստել, հյուսել. հորինել, ուժով
ամուր դառնալ, զարդարել, քաջ, գեղեցիկ,
գեղեցիկ կերպով հորինել, ուժեղ* իմաստնե-
րը:⁶⁵ *Դարբին* բառով հայերեն նշվում է ոչ մի-
այն երկաթագործ, այլ նաև պղնձագործ վար-
պետը:⁶⁶

3. Տեխնիկա-տեխնոլոգիական երևույթնե-
րի խորհրդանշային ենթատեքստը

Դարբնոցային տեխնիկա-տեխնոլոգիական
գործընթացներում նկատելի են նշանային
բնույթի բազմաթիվ տարրեր: Նշված տար-
րերը սերտորեն առնչվում են արհեստն ու-
ղեկցող ծիսա-հավատալիքային համալիրին՝
վերջինիս հետ ունենալով ընդհանուր ար-
մատներ: Կարելի է ասել, որ այդ արմատները
ծագում են մարդու մշակութային գործունե-
ության նախնական շրջանում սերտորեն փոխ-
կապակցված երկու ոլորտից՝ առասպելաբա-
նությունից և մոգությունից:⁶⁷ Առաջինը կարե-
լի է ընդունել որպես բնության, մարդու, հա-
սարակության և դրանց ներդաշնակ գոյավի-
ճակի տեսություն, իսկ երկրորդը՝ մարդու և
բնության պայքարում այդ տեսությունը գործ-
նականորեն կիրառող:⁶⁸ Ունենալով նման գոր-
ծառույթ, մոգական գործողության խնդիրնե-
րի թվին է պատկանում նաև այն գործիքների
ստեղծագործումը, որոնք անհրաժեշտ են մար-
դուն բնության դեմ պայքարելիս (պայքարի
կոնտեքստում ցանկացած գործիք կարող էր
ստանալ նաև գեների գործառույթ):⁶⁹ Նման

⁵⁸ Հը. Աճառյան, հ. 2, էջ 662:

⁵⁹ Անդ, էջ 668:

⁶⁰ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ. соч., т. 2, с. 719: Kou, Kovati - բառերը նախալավոնական շերտում ունեն նաև (թացի «խփել, հարվածել» իմաստներից) դարբնոցային արհեստ և արվեստ, հատկապես մոգա-
կան իմաստներ, իսկ այդ արմատով կազմված բառերը
«հրաշք, փառք, պատիվ, կախարհումք, կախարհական
ուժ, կախարհություն» իմաստները: Հին հնդկերենում
և լիդիական լեզվում այն ունի «իմաստուն, քուրմ, պո-
ետ, գուշակ» իմաստները: Չեխերենում Kovat նշանա-
կում է դարբին, տես А. А. Гиндин, Некоторые вопросы
древнего балканского субстрата и адстрата, с. 62: Ըստ Վ. Իվանովի վկայության, սլավոնական քարառ-
նեից մեկում դարբնություն նշանակում է նաև
կախարհություն (հրաշագործություն իմաստով), տես В.
В. Иванов, Язык как источник при этногенетиче-
ских исследованиях и проблематика славянских
древностей. - Вопросы этногенеза и этнической ус-
тоиуи славян и восточных романцев, М., 1976, с. 32:

⁶¹ Հը. Աճառյան, հ. 3, էջ 353:

⁶² ՆՀԲ, հ. 2, էջ 299:

⁶³ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ. соч., т. 2, с. 715:

⁶⁴ Հը. Աճառյան, հ. 1, էջ 636:

⁶⁵ Անդ:

⁶⁶ ՆՀԲ, հ. 1, էջ 604:

⁶⁷ Այդ պորթնի քննարկումը տես Б. Малиновский, указ. соч., с. 108:

⁶⁸ Անդ, էջ 109: И. Т. Касавин, указ. соч., с. 38-39:

⁶⁹ Մարդը բնությունից բաժանվելով՝ խախտել է բնու-
թյան մեջ իր ներդաշնակ գոյավիճակը: Հասարակու-
թյան գործունեությունն այդ ներդաշնակությամբ հասնե-
լու պայքար է: Ցանկացած պայքար հոգեբանորեն քառ-
սը կոսմոսի վերածելուն ուղղված գործողություն է: Օ.
Ֆրեյդենբերգը գտնում է, որ պայքարն ընկած է նախնա-
դարյան մտածողության կողմից տիեզերքի բացատրու-
թյան և բնության հետ հաղորդակցման (տնտեսական

գործիքներ ստեղծել կարող էր նախնադարյան «գիտնականը», որը բոլորից ավելի լավ էր ճանաչում մարդուն ու բնությունը (հասարակության նկատմամբ գործառնություն ավելի ուշ անցնում է առաջնորդին, հետագայում՝ թագավոր) և նրա հետ տիրապետում էր հաղորդակցման հմտություններին: Մոզը բնության նկատմամբ հասարակության կողմից մղվող պայքարի առաջնորդն էր և այն իրագործելու համար անհրաժեշտ տարրերի ու գործիքների հորինողն ու պատրաստողը: Նախնադարյան հասարակության ցանկացած գործունեության ոլորտ՝ սկսած հավաքչությունից ու որսորդությունից և վերջացրած պաթզունակ տնայնագործությամբ, պայքար էր բնության դեմ՝ վաղուց կորցրած ներդաշնակության վերականգնման ակնկալիքով: Այսպիսով, մի կողմից նախնադարյան արհեստավորությանը կարևոր դեր էր հատկացվում, քանի որ այն պայքարի իրագործմանն անհրաժեշտ գործիքների (զենքի) ստեղծման ոլորտն էր: Այուս կողմից էլ այդ գործիքները նախնադարյան արհեստավորները պատրաստում էին բնատարրերից, ինչը կարող էր հնամենի մտածողության մեջ արտացոլվել որպես հակադրություն բնությանը: Այսինքն՝ արհեստն ինքնին հակադրություն է բնությանը և արհեստավորը բնությունից իսկ վերցրած միջոցներով ստեղծում է նրա դեմ պայքարելու զենք: Ըստ երևույթին, սրանով է պետք բացատրել նաև դարբնի ծիսական գործառնությամբ մշակութային հերոսի և նրա օգնականի (հերոսի գեները պատրաստողի) դերերի զուգակցումը: Այդ ամենի իրագործման համար նախնադարյան արհեստավորը պետք է ճանաչեր բնությունը և այն բնատարրերը, որոնց հետ գործ էր ունենում: Ըստ այս գործառնությունների նախնադարյան արհեստը մոտենում է նախնադարյան ալքիմիային և վերջինիս հետ մտնում մոգության մեջ:⁷⁰ Կարելի է ասել, որ մոգությունը որպես բնության, մարդու և հասարակության մասին գիտելիքները և դրանց վիճակապակցվածության ու

ազդեցության օրենքներն ամրոգացնող գործունեության կիրառական ոլորտ, ներառել է նաև նախնադարյան արհեստագործությունը որպես իր խնդիրների իրագործումն իրականացնող ճյուղերից մեկը: Լինելով բնատարրերի հետ անմիջականորեն կարգված գործունեության բնագավառ, մոգության համակարգում արհեստավորությունը հատկապես նախնադարյան մետաղագործությունը միահյուսվում է ալքիմիայի հետ:⁷¹ Ուստի և առասպելի գործառնությամբ որպես մոգական գիտելիքների տեսություն տարածվում է նաև ալքիմիայի և արհեստների վրա: Ըստ այդմ, այն տարրերը, որոնց միջոցով կառուցվում է Տիեզերքը, այն ուժերը, որոնք մասնակցում են Տիեզերքի արարչագործությանը դրական և բացասական առումներով, և այն օրենքները, որոնց համաձայն առասպելում բացատրվում է Տիեզերքի գոյատևման կարգը, ընկած են նաև ամեն մի տեխնոլոգիայի հիմքում:⁷² Նախնադարյան արհեստավորը տեխնոլոգիական գործընթացի գլխավոր հերոսն ու հիմնական կազմակերպիչն էր, որը վերարտադրելով Տիեզերքի արարչի նախասկզբնական գործունեությունը բնական հիմնատարրերից (կրակ, ջուր, օդ, հող, մետաղ, փայտ), կրկնում էր արարչագործությունը:⁷³ Արհեստի նման ընկալման հայոց մեջ կարելի է հանդիպել նույնիսկ միջնադարում, Ստեփանոս Օրբելյանի երկում: Վկայաբերելով այն, որ դարբնները քարից երկաթ են հանում, երկաթից սուսեր և այլ գործիքներ պատրաստում, մյուս արհեստավորներն էլ համապատասխանաբար ստեղծում

գործունեության) հիմքում: *Օ. Փրեյդենբերգ*, *указ. соч.*, с. 55:

⁷⁰ Կառո նախնադարյան ալքիմիայի և տեխնոլոգիայի միջև արժանացել է մի շարք հեղինակների ուշադրությանը, որոնք նույնպես ընդհանրություններ են տեսնում դրանց սիմվոլիկ լեզվի և մեթոդների միջև. *R.J. Forbes, E.J. Dijksterhuis*, *A history of science and technology*, vol. 1, pp. 13-31, 83-93; *T.A. Wertime*, *The coming of the age of steel*, p. 4. *М. Элиаде*, *Космос и история*, с. 176:

⁷¹ Դարբնի և մոգի գործառնությունները շատ ժողովուրդների մեջ համանման են, որի հավաստումը տես. *М. Элиаде*, *указ. соч.*, с. 176. *Г.Р. Галданова*, *Доламаустические верования бурят*, М., 1987, с. 87-91. *Е.Н. Черных*, *Металл-человек-время*, с. 193-195. *О. Шрадер*, *указ. соч.*, с. 243: *А. Брайант*, *Зулусский народ до прихода европейцев*, 1953, с. 233: Այլ արհեստավորներին սրբազան հատկանիշներ վերագրելու մասին տես. *О.М. Фрейденберг*, *Поэтика сюжета и жанра*, с. 60, 367. *Б. Малиновский*, *указ. соч.*, с. 108. *А.М. Hocart*, *Kings and counsellors*, pp. 116, 125:

⁷² Տիեզերքի արարման և տեխնոլոգիական ռանաձևի միջև կապն ուսումնասիրել է նաև Ա. Բայրուրինը, տես. *А. Байбурин*, *Семантические статус вещей и мифология*, с. 221. *Его же*, *Семантические аспекты функционирования вещей*, с. 64:

⁷³ Ա. Բայրուրինը տեխնոլոգիական գործընթացը դիտում է որպես Արարչի գործառնությամբ կրող մարդու կողմից բնատարրերի միջոցով Տիեզերքի արարումը վերարտադրող գործողություն, տես. *А.К. Байбурин*, *Семантические аспекты...*, с. 64:

են առարկաներ այլ նյութերից, նա ավարտում է. «ահա սրանցով մարդիկ նմանվում են աստծուն և արժաչակից կոչվում»:⁷⁴

Փաստորեն, բնության հետ հարաբերվելիս մարդը հակադրվում է նրան, այդ հակադրության մեջ ընթացումը սեմանտիկորեն նույնացվում է քաոսի հետ: Տեխնոլոգիական գործընթացում տեղի է ունենում բնության քաոսային, անկազմակերպ, տարերային ուժերի ենթարկումը մարդուն և այդ միջոցով կարգավորված վիճակի ստեղծում, որը համապատասխան է Տիեզերքի արարմանը: Այս ընափիլիսոփայական կառույցն է ընկած նախնադարյան տիեզերաբանության, հասարակական օրենքների և հասարակություն-բնություն հարաբերության ներդաշնակ գոյության հիմքում: Նախնադարյան արհեստավորը ոչ միայն ստեղծում, այլ նաև վերարտադրում էր մարդ-հասարակություն-բնություն ներդաշնակ գոյավիճակը այն պարբերաբար նորոգելու միջոցով: Գործիք չլինելու գործընթացի նպատակն է բնության քաոսային ուժերին կարգավորված վիճակի բերելու, ապահովելու. հասարակության գործունեությունը անհրաժեշտ միջոցներով: Այս առումով տեխնոլոգիայի նպատակը շոշափելիորեն նյութական է: Սակայն տեխնոլոգիական գործընթացում ռոն-շակի հնազանդների կիրառմամբ գործիքի կամ ողև է իրի պատրաստումն իր հերթին նույնպես բնության քաոսային ուժերի ենթարկման ու հնազանդեցման էր ծառայում: Այսպիսով, ինչպես նախնադարյան մարդու գործունեության մյուս ոլորտները, արհեստը նույնպես իր ծագման շրջանում կառուցվել է սինկրետիկ սկզբունքով՝ նյութական և ոգեղեն միահյուսվածությամբ: Համաձայն դրա, արհեստը, մի կողմից, նյութեղեն առարկա պատրաստելու ֆիզիկական գործընթաց է, մյուս կողմից՝ ոգեղեն իմաստ ունեցող ծիսական գործողություն, քանի որ ըստ հնամենի աշխարհընկալման, բոլոր առարկաների ֆիզիկական արտաքինը օժտված է ոգեղենությամբ:⁷⁵ Հնամենի այդ սինկրետիզմը, որը բնորոշ էր նաև արհեստին, քայքայվեց, երբ մարդկային մտածողության և

հոգեբանության մեջ կատարված փոփոխության հետևանքով դադարեցվեց գործունեության և աշխարհընկալման առաստվելականացման միահյուսվածությունը: Պահպանվեց միայն աշխարհընկալման առաստվելականացումը: Դրա շնորհիվ մարդկային գործունեության մեջ առաջացան պրոֆան-ֆիզիկական և սակրալ-ոգեղեն ոլորտները:⁷⁶ Արհեստում դա արտահայտվեց տեխնոլոգիայի՝ որպես ինքնուրույն, պրակտիկ գործունեության ոլորտի պրոֆանացմամբ: Երբ մարդը սկսեց շնչավորել միայն իրեն շրջապատող ընթացումը, իսկ իր պատրաստածը դիտել որպես կենցաղային իր, արդեն նպատակի ուղղվածությունը փոխվեց իրերի գործնական օգտակարության կողմը:⁷⁷ Այս գործընթացը նկատելի է մարդու հոգեբանական փոփոխություններում: Է. Ֆրոմը նշում է, որ կան լեգուններ, որոնցում ռացակայում է «ունենալ» բառը, որը է. Բենվենիստի պնդմամբ առաջացել է «դա վերաբերվում է ինձ» արտահայտությունից:⁷⁸ Սա վերաբերում է, որ հոգեբանորեն «լինել» կեցության իմաստով ավելի խոր երևույթ է և մարդու հոգեբանության համար ավելի սկզբնական: Առանց լինելու չի կարելի նաև ինչ-որ բան ունենալ: Նախնական մտածողությունը, որի համար իր շրջապատն իր պես շնչավոր էր և ինքն էլ զգում էր իրեն այդ ամբողջության մի մաս, կարող էր իրեն և իր գոյությունն ընկալել կեցության իմաստով: Սակայն, երբ շրջապատող աշխարհը ճանաչողության գործընթացում ըստ իրեն դադարեց շնչավոր, իր նման կենդանի ոգով օժտված լինելուց, մարդու համար դրանք

⁷⁴ *Ստեփանոս Օրբելյան*, Այունիքի պատմություն, էջ 66:

⁷⁵ Անշունչ առարկաների շնչավորման մասին տես *В.Н. Перцов*, Культура и религия древних пруссов, с. 345. *Е.М. Мелетинский*, Структурно-типологический анализ мифов северо-восточных палеоазиатов, с. 92:

⁷⁶ Մառդկալահն հոգեբանության մեջ բնությունից առանձնանալու և նրան հակադրվելու հետևանքով կատարված փոփոխությունների արժանացել են հատուկ ուշադրության: Տես *Э. Фромм*, Иметь или быть. *Его же*, Бегство от свободы, М., 1990, с. 34-41. *М. Бубер*, Проблема человека, Перспективы. - Лабиринты одиночества, М., 1989, с. 91: Ըստ Ջ. Ռելֆ Օդիի, այդ տարանջատման հետևանքով փոփոխություն է տեղի ունեցել նաև ուղեղի ֆիզիոլոգիայում՝ *Дж. Релф Оди*, Человек существо одинокое; Биологические корни одиночества. - Лабиринты одиночества, М., 1989, с. 150: Այս տարանջատման հետևանքով էական փոփոխության ենթարկվեց նաև օրյեկտ սուրյեկտ հարաբերակցության գիտակցական ընկալումը տես *О.Н. Фрейдленберг*, Образ и понятие, с. 182-184. *Х. Ортега-и-Гассет*, указ. соч. сс. 212-218. *П. Тейяр де Шарден*, феномен человека, М., 1987, с. 38:

⁷⁷ *Н. С. Автономова*, Миф: Хаос и логос: Заблуждающийся разум?, М., 1990, 45-47:

⁷⁸ *Э. Фромм*, Иметь или быть, с. 29:

սկսեցին գոյություն ունենալ ոչ թե ինքնին, այլ այնքանով, որքանով նա դրանց տիրում է, որքանով այն մարդու սեփականությունն է:

Տեխնոլոգիան վերածվեց բնության նվաճման, այն մարդուն ծառայեցնելու միջոցի, իսկ ծեսը՝ մարդուն նման գործունեությամբ սպառնացող աններդաշնակության կարգավորման ուղղված գործողության (սա արհեստում ուղեկցող ծեսի պահպանման հիմնա տեսական հիմքը կազմող ամբողջական ա-կան պատճառն էր): Այս տարանջատումը հանգեցրեց այն բանին, որ տեխնոլոգիայի առասպելական թեման ուղեկցող ծեսերում որոշակի փոփոխություններ կրեց, իսկ դարբնի կերպարի բազմագործառնությունը ստացավ այս կամ այն դրսևորումը, մյուսները թողնելով չդրսևորված վիճակում: Ուստի և նախնական տեխնոլոգիա-ծեսին բնորոշ դարբնի բազմա-տարր գործառույթն իր այս կամ այն երանգի առաջնայնությամբ դրսևորվում է առանձին ծեսում:

Այսպիսով, նախնական տեխնոլոգիա-ծեսից ծագած ավելի ուշ շրջանի բնորոշ ուղեկցող ծեսը տարբերվում է սկզբնական սինկրետիզմի և բազմագործառնության ռացակայությամբ:

Վերն ասվածը հիմք կարող է ծառայել բացատրելու այն երևույթը, որ գրեթե բոլոր մշակույթներում արհեստավորներին վերագրում էին հատուկ հատկանիշներ և գիտելիքներ. որոնցում ուշադրություն է գրավում մի անխախտ տարր՝ համայնիկների կողմից արհեստի սահմաններից դուրս նրանց վերագրվող ուժը և ամենակարողությունը, որի շնորհիվ նրանք ունակ էին հարաբերության մեջ մտնելու այն ուժերի հետ, որոնք կարող են ազդել մարդկանց կյանքի վրա:⁷⁹

Բնության հիմնատարները դարբնոցային մշակույթում: Կրակի պաշտամունքը համա-մարդկային երևույթ է: Այն դրսևորումներ ունի արեգակի, կայծակի, օջախի և մի շարք այլ տարրերի հետ կապված հավատալիքներում: Մեզ հետաքրքրում են կրակի հետ կապված ավանդության շրջանի արիստիպերը, որոնք արմատներով առնչվում են մարդկային մտածո-

ղության հմանմանի ձևերի հետ: Մշակութային համեմատաբար վաղ շերտերում նման խնդրի իրականացումն առավել նպատակահարմար է ավանդական տաբերն ուսումնասիրելիս: Այդպիսի տարրեր կարելի է համարել բա-նավոր և գրավոր ավանդությունները, ծեսերը և ծիսական սովորույթները: Այս առումով ա-ռավել հարուստ աղբյուր կարող են ծառայել կրակի՝ որպես ընտանեկան օջախի պաշ-տամունքի հետ կապված հավատալիքները և ծիսական գործողությունները:⁸⁰ Այդ հա-վատալիքային համալիրում կրակը կապվում է հավերժության գաղափարի հետ: Այն հանգ-ցնելը մեղք էր և դժբախտության նշան: Կրա-կի հետ էր կապվում նաև գերդաստանի, ցեղի գոյատևման գաղափարը: Կրակը պահպա-նելը տան տարեց տղամարդու գործն էր ու պարտքի նշանը, որն արտահայտվում էր որ-պես արժանիք մշակող «օջախի մեծ» արտա-հայտությամբ:⁸¹ Կրակի հետ կապված պաշ-տամունքի դրսևորումներ կարելի է համարել նաև ընտանիքի կյանքում սրբազան համար-վող այս կամ այն՝ հատկապես կյանքի, վեր-արտադրության ու ծննդի իմաստը կրող ե-րևույթի ծիսական կապն օջախի հետ, որը, շնորհիվ կրակի պահպանության իր գործա-ռույթի, սրբազան կենտրոնի նշանակություն ունեցող ընտանիքի համար: Օջախի մշված գործառույթն հաճախ ստանում էր համահա-մայնքային ծիսական նշանակություն:⁸² Կրա-կը որպես սրբազան արժեք և տղամարդկա-յին խորհրդանիշ, մյուս բնատարրերի մեջ հա-մարվում էր առավել սուրբ և միշտ առաջ-նային տեղ ունեցող: Ինչպես ասվեց, կրակ հանգցնելը մեղք էր համարվում: Առավել մեծ մեղք էր, երբ նրա վրա ջուր էին լցնում:⁸³ Կրա-կի և երկաթի, որպես առաջնային բնատար-րերի պատկերացման ցայտուն արտահայ-տությունը կարելի է գտնել ժողովրդական մի պատկերացման մեջ, ըստ որի, երկաթը հաղ-թում է բոլոր պինդ նյութերին, սակայն ինքն էլ

⁷⁹ Տե՛ս *А. К. Байбурин*, Семантический статус ве-щей в мифологии, с. 221:

⁸⁰ Այդ մասին տե՛ս՝ *Խ. Սամուելյան*, Հայ ընտանեկան պաշ-տամունքը, ԱՂ, գք. XIV, Թիֆլիս, 1906, 2, էջ 157-163:

⁸¹ *З. Харатьян*, указ. соч., с. 42:

⁸² Օջախի պաշտամունքն ընդունված և տարածում գտած երևույթ էր նաև սլավոնական միջամառում *А.Н. Афанасьев*, указ. соч., т. 2, с. 29-32:

⁸³ *Ե. Լալայան*, երկեր, հ. 2, էջ 158, 419: Սլավոնների մոլոյն սովորույթը տե՛ս *А.Н. Афанасьев*, указ. соч., т. 2, с 8-9.

հաղթվում է կրակից:⁸⁴ Ըստ այս բանաձևի, երկաթը հզորագույնն է այլ նյութերի մեջ, սակայն գերագույնը բոլորի նկատմամբ կրակն է: Կարծում ենք, որ կրակի որպես գերագույն բնատարրի գործառնությունը է պայմանավորված նրան վերագրվող մաքրելու, մաքրագործելու հատկությունը: Չլինելով նյութեղեն, այն իշխում է բնության վրա, ենթարկելով նյութականը: Այդ հատկանիշի շնորհիվ այն կարող է չեզոքացնել մարդկանց և սիեզերքի թշնամի չար ուժերը: Ըստ երևույթին, սա այն պատճառներից է, որը պայմանավորում է կրակի անհրաժեշտությունը սրբազան արարողություններում, որով բնորոշվում են ոչ միայն հայերի, այլ նաև աշխարհի բոլոր ժողովուրդների ավանդույթները:⁸⁵

Կրակին վերաբերվող հայկական ավանդությունները զննելով, հանդիպում ենք փաստերի, ըստ որոնց կրակը համարվում է ոչ երկրային, երկնային երևույթ, որը երկնքից երկիր է տեղափոխվում կայծակի միջոցով: Վերջինիս առաջացրած կրակն էլ հատկապես ունի շեշտված սրբազան իմաստավորում:⁸⁶

Կրակի հետ անմիջականորեն կապված է դարբնոցային տեխնոլոգիայի հիմնատարը՝ հանդիսացող երկաթը, որը երբեմն ստանում է սեմանտիկ ընդհանրություն: Խորհդանշանային այն օղակը, որում միմյանց հետ հաճախ միահյուսվում են կրակն ու երկաթը, կայծակի ասիանդական պատկերացումներն են: Ինչպես վերը քննարկված ծեսերում տեսանք, կայծակը որպես երկնային կրակ, հաճախ ներկայացվում է որպես երկնքից ընկնող պողպատ: Այսինքն՝ երկաթի, որպես երկնային ծագմամբ մետաղի պատկերացումը հայերի ավանդություններում բացահայտ դրսևորում ունի: Կցանկանայինք ուշադրություն դարձնել երկնային երկաթի ավանդության հետ կապված հյուսիսկովկասյան՝ հատկապես արևելա-օսական մի զուգահեռի վրա: Համաձայն դրա, երկնային երկաթն ունի աստվածային սերմի հատկություն, որն ընկնելով երկրի վրա, բեղմնավորում է այն:⁸⁷ Հայոց մեջ

երկնային երկաթի նման իմաստավորման հեռավոր արձագանքներ կարելի է նկատել «Հուդայի աչքը հանելու» ծեսի երկաթե մեխերի և հողի պտղաբերության մոգական գործողությունում: Իսկ եթե դրան ավելացնենք գերմանա-սկանդինավյան միջավայրում մուրճին ֆալոսային հատկանիշներ վերագրելու ավանդությունը,⁸⁸ ապա հնդեվրոպական դարբնի կերպարում կարելի է տեսնել պտղաբերության հետ կապված տղամարդկային արարչագործ նախասկզբի գործառնություն: Ասվածը, սակայն, ընդամենը համեմատական նյութի սահմաններում արված ենթադրություն է: Իսկ հայերի վերաբերյալ նման հետևություն անելու համար առայժմ բավականաչափ նյութ չունենք: Այսպիսով: Կրակի և երկաթի հայկական պատկերացումներում դրանք դիտվում են որպես տղամարդկային սկզբի հետ կապված երկնային երևույթներ և օժտված են չարխափան, մաքրագործ սրբազան հատկությամբ: Դարբնոցային տեխնոլոգիայում կրակի ստացման և երկաթի շիկացման գործում մեծ տեղ է տրվում օդին, որը կրակալան է մղվում փուքսի միջոցով: Շարժվող օդը հայերեն ընդունված է անվանել *փուք*, *քամի*: Քամու առաջացումը ժողովրդական հավատքում կապվում է Նոյ մահապետի աղջկա սրնգի հետ: Մի այլ ժողովրդական բացատրությամբ էլ քամին առաջացնում են հրեշտակները երկրի չորս կողմերում փչելու միջոցով:⁸⁹ Կենդանիների կամ մարդկանց կողմից օդ փչելը նույնպես ունի *շունչ* իմաստը՝ «ներքին օդ կամ հողմ թռքոյ կենդանվոյ», կարողում ենք ՆՅԲ համապատասխան բաժնում: Շունչն ունի նաև կենդանացնելու, կյանք հաղորդելու իմաստ:⁹⁰

Հաջորդ բնատարրը, որն օգտագործվում է միսման տեխնոլոգիական գործընթացում, ջուրն է: Դարբնոցի ջրի բուժական հատկանիշների քննարկման ժամանակ արդեն ժանոթացանք այն հիմնական խորհրդանշանային գործառնություններին, որոնք հայոց ավանդությունում տրվում են ջրին: Ըստ այդմ, վստահորեն կարելի է ասել, որ ջրի ծիսաառասպելական սեմանտիկան ընդհանուր է դրա համաշխարհային առասպելական իմաս-

⁸⁴ *ՆՅԲ*, հ. 1, էջ 688:

⁸⁵ *Օ.Մ. Փրեմենբերգ*, Поэтика сюжета и жанра, с. 64: *G. Jobes*, op. cit., vol 1, pp. 571-572: *W.K.C. Guthrie*, op. cit., pp. 435-464: *J. Barnet*, Early Greek philosophy, London, 1920, pp. 135-137:

⁸⁶ *Ե. Լալայան*, Երկեր, հ. 2, էջ 158, 240:

⁸⁷ *Ջ. Դյումեզիլ*, Скуфы и нарты, с. 29:

⁸⁸ *E.O.C. Turvil-petra*, op. cit. p. 81:

⁸⁹ *Ե. Լալայան*, Երկեր, հ. 1, էջ 241:

⁹⁰ *ՆՅԲ*, հ. 2, էջ 959:

տավորման հետ, համաձայն որի ջրի եռսողը և չիոսողը կազմում են հակադրամիասնություն: Առաջինը կապվում է ընդհանուր, տղամարդկային նախասկզբի հետ, երկրորդը՝ չարի և կանացիության: Լինելով նախնական քառսի համանիշը, այն նաև ամեն ինչի նախասկզբն է:⁹¹ Շատ ժողովուրդների առասպելներում այն առաջին ընդհանրամասն և ծննդի գործողության միջավայրն է, որից արարվում է Տիեզերքը: Պետք է կարծել, որ նման պատկերացումները խորթ չեն եղել հայերին, քանի որ դրանց հիմքը կազմող սեմանտիկան ընդհանուր է նաև հայկական նյութին:

Տեխնոլոգիական հնարների ծխախորդանշանային արմատները: Դարբնոցում առարկայի պատրաստումը կատարվում է չորս հիմնական գործողությամբ. տաքացում, կոփում, կոում և մխում: Տաքացման գործողությունը սկսվում է հնոցում կրակի նախապատրաստումից: Կրակը վառվում է փութից օդ մղելով միջոցով: Այն սովորաբար վառում էին առավոտյան լուսարացին և մարում արևամուտին, աշխատանքային օրվա վերջում: Դնոցում կրակը վառ էր ամբողջ օրվա ընթացքում, նաև դադարի պահերին: Անհրաժեշտության դեպքում այն բորբոքվում և թեժանում էր փութի միջոցով: Կրակը չէին մարում, այլ թողնում էին ինքն իրեն հանգչի: Տաքացման համար երկաթը կրակի մեջ պահվում էր այնքան, մինչև դառնում էր որոշակի երանգի վառ ընթացքով:⁹² Դրան հաջորդում էր կոփման գործողությունը: Կոփման և կռման գործողությունները տեխնոլոգիայում չափազանց միահյուսված են դրսևորվում: Երկուսի հիմքում էլ մուրճով երկաթը ծեծելու միջոցով ցանկալի ձև տալու գործողությունն է: Կոփման գործողությունը՝ մեծ մուրճով, կոելունը՝ փոքր մուրճով մշակման փուլն է: Այսինքն՝ կոփման գործողության հիմնական կատարողն աշակերտն է, կռման գործողությանը՝ վարպետը: Նկատի ունենանք նաև, որ կոփման ընթացքում աշակերտի գործողությունները մուրճով ազդանշաններ տալու միջոցով ղեկավարում է վարպետը, իսկ կռման գործողության կա-

տարողը միայն վարպետն է: Աշակերտն այս գործընթացին չի մասնակցում: Կոփումը սկսվում է մուրճի ազդանշանի դեր կատարող երեք խորհրդանշանային հարվածներով: Ազգագրագետ Կ. Սեդրոսյանի ճշգրտմամբ, այդ հարվածներից թռչող կայծերը համարվել են *սատանայի կրակ*: Ըստ դրա ժողովուրդական մեկնության, կոփման ժամանակ վարպետի մուրճի առաջին հարվածներից թռչող կայծերը նշանակում են, որ *սատանայի կրակը* դուրս է գալիս և մնում է *աստծո կրակը*: Կռման գործողությամբ տաքացված երկաթը ստանում է վերջնական տեսք: Այս գործողությունը երկաթին ձև տալու գործընթաց է: Այդ կերպը, որը տրվում է ամեն երկաթին, էության մշակությանն է: Ձևը հակադրվում է անձրևին, ինչպես օգտակարը՝ անօգտակարին և մշակույթը՝ բնությանը: Նյութը, որ ունի ձև, օժտված է ձև ստեղծելու ունակությամբ, ուստի էլ այն ունի սրբազան հատկանիշներ և գործողությունը նույնպես սրբազանացված է:

Միսման գործողության խորհրդանշանային իմաստին արդեն ծանոթացել ենք և այն կարելի է մեկնել որպես ջրից իրի մոր որակով ծննդի գործընթաց: Թե ինչ ենթիմաստ է կրում «մոր որակը», կարելի է նկատել ժողովուրդական մի ավանդությունում: Ըստ դրա, միսման, ինչպես և կոփման ժամանակ *սատանի կրակը* վերանում է, *աստծո կրակը* պահպանվում:⁹³ Նշված գործողություններն էլ դարձնում են զերրանականի աստիճանի: Բնության տարրերից՝ կրակը, մարդկանցից՝ դարբինը հնագանդեցնում է երկաթը: Սակայն վերջինս ոչ միայն հնագանդեցնում, այլ նաև ձև տալու միջոցով ստեղծագործում, արարում է երկաթե առարկաներ: Տաքացման գործողությունն այս առումով քննարկելու դեպքում րացահայտվում է դրա խորհրդանշանային նախնական իմաստներից մեկը ևս: Կրակի վերը բերված հատկանիշների կոնկրետացմամբ կարելի է ասել, որ դարբնոցում այն ստանում է մարդու կողմից բնության մշակությանցման յուրատեսակ դրսևորում, որն արտահայտվում է ամենից առաջ կրակի որ-

⁹¹ Տե՛ս P. MacLagan, op. cit., pp. 22, 28. S.G.F. Brandon, op. cit. p. 23. G. Jobes, op. cit., vol. II, pp. 1667:

⁹² Տաքացման գործողության ամբողջական նկարագիրը տե՛ս Ա. Թադևոսյան, ՊԱՆ, տ. 1, էջ 22-25:

⁹³ Թե կռման կոփման վերը քերված մեկնությունն և քե միսման վերաբերող այս նյութը հաղորդել է ազգագրագետ Կ. Սեդրոսյանը, որի համար երախտագիտություն եմ եայտնում մրան:

պես արարիչ, ստեղծարար իմաստավորման մեջ: Դրա հետ է կապված նաև քուրայի կրակի նկատմամբ առանձնահատուկ ակնածալից վերաբերմունքը: Նախ, քուրայի կրակը վառվում էր արդեն իսկ սրբազան համարվող օջախի կրակից: Օջախի կրակը մշակութային-բնութային հակադրության մեջ առաջինի կայացմանը ծառայող և իրականացնող մարդկության ամենահզոր միջոցն է: Սննդի մեջ այն հում-բնականը դարձնում է եփած-մշակութային: Ձմռանը միջոց է ցբտի, գիշերը՝ մթի դեմ և այլն: Այսինքն՝ այն մշակութային տարածքի յուրացման (նաև՝ ստեղծման և պահպանման) գլխավոր պայմանն է, ուստի և ծիսաառասպելական ենթատեքստում մշակութային-բնութային հակադրությունում՝ մշակութային հերոսին ուղեկցող գլխավոր ցուցիչը⁹⁴: Գոյություն ունեն քուրայի կրակի հետ կապված մի շարք սնահավատություններ, որոնք ցուցում են նաև հնոցային կրակի սրբազնությունը: Բացի այն, որ դա կայացվում էր օջախի կրակից, նաև չարիափան էր: Եթե «չար աչքի» համրավ ունեցող մեկը հայտնվեր դաբնոցում, ապա վառվետն ամեն կերպ աշխուստում էլ գոնե մի թել պոկել նրա հագուստից և ձգել քուրայի կրակը, որպես թե սպասվող չարի դեմն առնող միջոց: Իսկ եթե կարծում էին, որ «չալն աշակերտին է բռնել», ապա աշակերտը երեք անգամ պետք է անցներ քուրայի կրակի վրայով կամ ոտքերը կրակի երկու կողմերը դրած, կանգնել քուրայի պատվանդանին⁹⁵: Կալելի է դաբնոցային հնոցում վառվող կրակը բնորոշել. ա) մաքրագործի, բ) նյութեղենի վրա իշխող ոչ նյութեղեն գեղագույն բնատարր, գ) նշված երկու հատկանիշներով հանդերձ, մշակութայնացված և բնության քառսային ու վտանգավոր ուժերը մշակութայնացնող: Վերջին երկու ընդգծված հատկանիշները քննարկենք ավելի մանրագին: Կրակը երկնային և երկրային է: Երկրային կրակն առաջանում է երկնայինից: Այսինքն՝ կրակի աղբյուրը երկինքն է: Երկնային կրակը համարվում է սրբազան: Սակայն, ըստ էության, այն երկբնույթ է՝ չար և բարի: Բնական, անկառավարելի վիճակում գտնվող

կրակը քառսային բնույթ ունի: Հնոցի կրակը, ի հակադրություն բնության մեջ գտնվող կրակի, միայն օգտակար և ստեղծարար է: Բնատարրի մշակութայնացումը ենթադրում է պայքար նրա երկակիության դեմ, որն ըստ էության, ուղղված է չարի, վնասակարի վերացմանն ու բարու, ստեղծարարի պահպանմանը: Ահա վերջինս էլ բնորոշ է հնոցում վառվող կրակին: Հնոցի կրակը որպես մշակութայնացված կրակ հակադրվում է բնության կրակին, ինչպես Արրազանը-վնասակարին, արարիչը ավերիչին: Եթե ասվածը խմբավորված ձևով ներկայացնենք, կստացվի հետևյալ հակադրությունը

բնական կրակ - մշակութային կրակ,
երկբնույթ (չար ու բարի) - բարի,
ավերիչ և արարիչ - արարիչ:

Բնական կրակն ունի երկու ձև երկնային և երկրային: Ինչպես նշվեց, վերջինի աղբյուրն առաջինն է: Ամեն մի երկրային երկնայինի ծնունդ է: Որպես արարման աղբյուր, երկնայինը Արրազան է, իսկ երկրայինը չար է՝ որպես ավերիչ: Կրակի այդ հատկանիշը երկնայինի երկիր տեղափոխվելու արդյունք է, որն էլ պայմանավորում է երկնային կրակի երկբնութությունը: Այդ երկբնութության վերացմանն է ուղղված կրակի մշակութայնացումը, որի դրսևորումներից մեկն էլ քուրայի կրակն է: Ահա այդ կրակի տիրապետողն է դարբինը: Փաստորեն, չարը, վիշապայինը բնական, երկրային ազատ վիճակում գտնվող կրակ է և չարի դեմ պայքարը, ըստ էության, ազատ վիճակում գտնվող երկրային բնատարրի մշակութայնացումն է, վնասազերծումը: Դրանով կրակին երկրի վրա նույնպես տրվում է աղարելու գործառնություն և այն ծառայում է մարդուն նրա ստեղծարար աշխատանքում: Սակայն այս կրակի սրբազանությունը տարբերվում է երկնային կրակի սրբազանությունից, ինչպես միկրոաշխարհը մակրոաշխարհից:

Այն պատկերացումը, թե երկնքից կրակն ընկնելով, անցել է հողի մեջ, տարածվում է նաև մյուս հիմնական պինդ-նյութերի՝ փայտի, քարի և երկաթի վրա: Վերջինս տարբերվում է մյուսներից այն բանով, որ առասպելական պատկերացումներում համադրվում է երկնային կրակի հետ, որը նույնպես կայծակի ձևով

⁹⁴ Կրակն այս առումով դիտարկում է Օ. Ֆրեյդենբերգը. Օ. Մ. *Фрейдэнберг*, Поэтика сюжета и жанра, с. 64:

⁹⁵ Այս նյութը նույնպես հաղորդել է Կ. Սեդրոսյանը:

ընկնում է երկրի վրա:⁹⁶ Ուստի կրակի երկ-
բնությունը վերաբերող սեմանտիկան տա-
րածվում է նաև երկաթի վրա: Կարծում ենք,
որ այս սեմանտիկ դաշտում երկաթի տաքա-
ցումը, շիկացումը կրակում, այն վայրի, ան-
մշակ, անձև վիճակից մշակութային վիճակի
տանող առաջին քայլն է: Եվ այդ քայլում եր-
կաթի միջոցով նշվում է կրակի մշակութայ-
նացման ակտը՝ համաձայն երկաթ-կրակ սե-
մանտիկ կապի:⁹⁷ Այս համակարգում իմաս-
տավորվում է նաև օդ-կրակ կապը: Օդի միջո-
ցով անշունչ կրակը կենդանություն է ստա-
նում կամ դառնում է շնչավոր: Վերջինս էլ հա-
մազոր է ստեղծարարին: Այսինքն՝ շնչավոր-
վելուց հետո կրակը դառնում է գործունյա և
ստեղծագործման ունակ:⁹⁸

Դարրնոցային տեխնոլոգիայի գաղտնի-սր-
բազան իմաստներից մյուսն էլ, որը նույնպես
գործում է մշակույթ-բնություն հակադրության
համակարգում, թաքնված է կոելու գործողու-
թյան ենթատեքստում: Ինչպես նկատեցինք,
լեզվաբանական ստուգաբանությունում *կո-*
լիել բառն ուներ «հարվածել, խփել, սպանել»
իմաստները, իսկ *կոել* բառում կարելի է տես-
նել «մեջքին, թիկունքին հարվածելու իմաստ:
Եթե այս գործողությունների բառային ենթա-
տեքստը համադրենք գործողության հետ, աբ-
ղա նշված «սպանելու և մեջքին, թիկունքին
հարվածելու» իմաստները կարծես թե չեն
համապատասխանում բուն գործողությանը:
Սպանելու իմաստը մտնում է դարբին-

ամպրոպամարտիկի վիշապաքաղության
գործառույթի մեջ: Անհասկանալի է մնում *կոել*
բառի բերված բացատրությունը: Դաշտային
աշխատանքների ընթացքում հանդիպել ենք
զնդանին կենդանու մասերի անվանումներ
տալուն: Համաձայն դրա, զնդանն ունի «պոզ,
դմակ և մեջք»: Այստեղ դժվար չէ նկատել
խոյի նկարագիրը, որն հայոց մեջ ընդունված
զոհաբերվող ծիսական կենդանիներից էր:⁹⁹
Զնդանի այն մասը, որի վրա կոանի միջոցով
դարբինը երկաթ էր կոում, անվանվում էր
մեջք (այսինքն՝ կուռ): Կոել բայը կարելի է
մեկնել որպես խոյ-զնդանի մեջքին հար-
վածելու գործողություն:¹⁰⁰ Մշակույթ-բնություն
համակարգում դարբնի մշակութային գործա-
ռույթում կարելի է հանդիպել մի այլ նախնա-
կան ենթատեքստի ևս: Նախ, կոելու գործո-
ղության մեջ դարբնի կերպարում կարելի է
տեսնել որսորդի, որպես վայրի կենդանու ըն-
տելացնող, մշակութայնացնող (սրա մեջ մտնում
է նաև կենդանուն սպանելը) սրբազան գոր-
ծառույթը:¹⁰¹ Երկրորդ, եթե հիմք ընդունենք
հայտնի խորհրդանշանային զուգորդումը, ըստ
որի խոյն ամրապայային հեղուսի սիմվոլներից
է, ապա մոտենում ենք Տիեզերական ծառի
մոտ միասեռ երկվորյակների կովին և զոհի
զաղափարին:¹⁰² Այստեղ երկվորյակի գործա-
ռույթում հանդիպում ենք կենդանական (չար)
զույգի և նրա զոհաբերության դրվագին: Աս-
վածը հակադիր զույգերի միջոցով ուղղա-
հայաց տեղադրելու դեպքում, ստանում ենք
հետևյալ պատկերը՝

հրկվորյակներ	
Ամրապրպամարտիկ	խոյ
դարբին (մարդ)	կենդանի
բարի	չար

⁹⁶ Այս մասին տես *Г.Ф. Чурсин*, Культ железа у Кав-
казских народов с. 69; *В.В. Иванов*, История славян-
ских и балканских названий металла, с. 163:

⁹⁷ Այս համակարգում կրակի շնչավորումը համազոր է
դառնում վայրի բնական կրակին հակադրվող սրբազան
կրակի հետ: Վայրի կրակի իմաստը կրում է հանքային
երկաթը, որը սկզբնապես (ըստ երկնային պատկանելու-
թյան) նույնպես ունի սրբազան իմաստ: Սակայն որպես
հանքային՝ ստորերկրյա, այն ստանում է չար, վնասա-
կար իմաստ: Այս առումով դարբնի դերը երկաթին ստոր-
երկրյա «զերությունից» ազատելը և նրա բարի, սրբա-
զան հատկանիշները վերականգնելու մեջ է: Այսինքն տե-
խնոլոգիական գործողության իմաստը երկաթը չար սե-
մանային դաշտից բարի, սրբազան դաշտ տեղափոխելու
մեջ է կամ, ավելի պարզ ասած՝ մշակութայնացնելը: Այս
առումով հետաքրքիր զուգահեռ կարելի է տեսնել սկան-
դինավյան առասպելական դարբին Իլմարինենի կեր-
պարում, որը միակն է, ով դիտե երկաթի ծննդի գաղտ-
նիքը թաքցնող մոգական խոսքերը՝ տես *A. Lang*, op.
cit., p. 169:

⁹⁸ Ըստ ենդկական առասպելաբանության, օդից կամ
սրբազան շնչից է ծնվում կրակը՝ *D. MacLagan*, op. cit.,
pp. 21, 29-31:

⁹⁹ *2. Խառատյան*, Եզն մորթելու սովորույթը և փեսան
հայոց հարսանիքում. - Լրաբեր հասարակական գիտու-
թյունների, 1991, N 2, էջ 119:

¹⁰⁰ Կենդանու մեջքի, որպես սրբազան կետի դիտարկու-
մը տես *Ա. Դեմիրխանյան*, Կենդանակերպ պատկերնե-
րի սրբազան համարվող կետերի մասին. - Երիտասարդ
գիտնականների կոնֆերանս, մվիրված Վ.Ի. Լենինի ծնն-
դյան 110 ամյակին (զեկուցումների թեզիսներ), Երևան,
1980, էջ 39:

¹⁰¹ Սրանում կարելի է տեսնել այլ ժողովուրդների առա-
սպելներում դարբնի և որսորդի կերպարների զուգորդ-
ման զուգահեռը:

¹⁰² Երկվորյակների առասպելության հանգամանակից ու-
սումնասիրությունը տես *Ա. Абрамян, А. Демурханян*,
Мифологема близнецов и мировое древо, ՊԲՀ, 1985,
թիվ 4:

Ըստ այդմ, Ամպրոպամարտիկը, սպանելով իր երկվորյակին, սպանում է իր չար էությունը: Սա նշում է դարբնի ծիսական մահը և որպես արարիչ, նոր որակով վերակենդանացումը:¹⁰³ Սա կոփման գործողության սկզբի «սատանի կոակը դուրս մղելու, աստծո կիակը թողնելու» բացատրության հետ համալիր դիտարկման դեպքում ստացվում է, որ կռելու գործողությունում հայոց դարբնոցային խորհրդանշանների և լեզվական անվանումների հիման վրա կարելի է վերականգնել նախնական ծեսի հիմքում ընկած առասպելության հետևյալ դրվագները

ա) Ամպրոպամարտիկ-վիշապ պայքարի արդյունքում վիշապի (կնոջ չար էություն) վնասազերծում,

ջ) Ամպրոպամարտիկ-խոյ պայքարում տղամարդկային չար էության ոչնչացում,

գ) Այս երկու կետերը ենթադրում են դարբին-արաբի գործունեության հաջողությունը:

4. Որտեղ և երբ հայերը կարող էին

ծանոթացած լինել երկաթի մշակության Յենվելով վերը շարադրված դարբնոցային ծեսերի և ծիսական սովորությունների վերլուծությունների վրա, կարելի է կոնկրետացնել հայոց ծիսակարգում դարբնի կերպարին բնորոշ հնամենի դրսևորումները: Դրանցից առաջնայինը կարելի է համարել դարբնի կարգապահ-պան, ամպրոպամարտիկ հերոսի հատկանիշները: Ծիսա-առասպելական այդ կերպարն իր մի շարք արտահայտություններով առկա էր վերը քննարկված բոլոր ծեսերում: Ջատկի տոնակատարության ծիսակարգում «ուրբաթարուբ» մատանի-ապաբանջանների պատրաստման և դրա հետ կապված ծիսական արարողություններում ամպրոպամարտի թեման կապվում է *վիշապ* տիեզերակործան հրեշից արևի ազատագրության հետ: Դրանում դարբինը որպես Ամպրոպամարտիկ հերոս, հանդես է գալիս որպես արևային հերոսի ուղեկից պաշտպան, համապատասխանաբար դրսևորելով ռազմական գործառույթ: Նշված սյուժե-

ով ամպրոպամարտի թեման չի կարելի ինքնուրույն համարել, քանի որ այն կազմող գործողությունը, ըստ էության, սկզբնական ցիկլի վերարտադրություն է: Այս տեսանկյունից դիտելու դեպքում, ամպրոպամարտի նշված սյուժեի հիմքում ընկած սկզբնական ցիկլը կարելի է համարել արևի արարման առասպելա-ծիսական թեման: Վերջինս քննարկված ծեսում դրսևորվում է ամպրոպամարտի ծիսական գործողությանը (ծիսական կռահարություն) զուգահեռ: Արևի արարումը, որպես արարչագործական բնության ծեսի արդյունք (մատանու նշանով), նույնպես համապատասխանում է վերադարձության բնության ծեսի արդյունքին (արևածագ): Ըստ այդմ, դարբինը նշված ծեսում, բացի Ամպրոպամարտիկի ռազմական զործառույթից, բնորոշվում է նաև առաջագործականով և աշխարհն արարողի ծիսական դերով: Այս ծեսում հանդիպում ենք նաև դարբնի և վիշապի կողմից վտանգված կնոջ ամուսնության ու մարդ արարածի արարման ծիսա-առասպելական թեմաների ադոտ ակնարկների: Հաջորդ ծեսում առկա է ամպրոպամարտիկի մի այլ դրսևորում:

Այս անգամ դարբին-ամպրոպամարտիկի ծիսական կռահարության «նպատակը» վիշապի փակած ակունքի ազատումն է: Չափազանց բարդ է դարբնի ծիսական դերերի պարզաբանումը «շոթայված հերոսի» ծեսում: Այստեղ վիշապին դարբնի հակադրության նպատակը Աշխարհը կործանումից փրկելն է: Այս թեմայի վիպականացումը դարբնին հակադրում է թագավորին: Արանում կարելի է նկատել դարբնի վաղեմի սոցիալական գործառույթի դրսևորման գծեր բնության գաղտնի լեզուն տիրապետող ոգեղեն առաջնորդի հակադրումը սոցիալական ոլորտի դեկավար առաջնորդին: Դարբին սրբազան անձը որպես բնության կոակը ենթարկող և այն մշակութային վիճակում պահող (հնոցի կրակ), նման գործառույթ ունի նաև կոակի նշված սիմվոլիկան կողո թագավորի նկատմամբ: Այստեղ կարծես թե նկատվում է նաև գերմանա-սաքսոնական միջավայրում հանդիպող թագավորի նկատմամբ դարբնի արտոնյալ վիճակի

¹⁰³ Հայոց հարսանեկան ծեսում այս ծիսական հնարի մեկնաբանումը տես. *Ձ. Խառատյան*, Եզն մորթելու սովորություն և փեսան հայոց հարսանիքում, էջ 119: Նման երևույթի համաշխարհային տարածվածության մասին տես *P. Radin*, The world of primitive man, pp. 153-154, 156:

հիշեցնող արտահայտություն:¹⁰⁴ Նկատելի է նաև դարբնի, որպես մշակութային-սրբազան կրակի կրող, հակադրությունը վայրի չաբ կրակին: Դարբինը դրսևորվում է նաև ժամանակն արարող ծիսա-առասպելական հերոսի հաականիշներով: Դարբնի ծիսական կերպարում *տիեզերապահական* հատկանիշների մի նոր տաբերակի ենք հանդիպում «Յուդայի աչքն» հանելու ծեսում, որտեղ դարբինը հանդես է գալիս որպես Ամպրոպամարտիկ հերոսի զենքեր կողո (օգնական): Իսկ դարբնոցի ջրի բուժական նպատակներով կիրառության ենթատեքստում առկա է Դարբին-Ամպրոպամարտիկի և ջրային վիշապի հակադրությունը: Ըստ դարբնոցի ջրի, բուժական հատկանիշները կարելի է տաբանել դարբնի վրա, որը նրա կերպարն ազգակից է դարձնում հնդեվրոպական միջավայրում տարածված դարբին-բուժականների կերպարին: Այսպիսով, ծեսի վերլուծական իմաստաբանությամբ բացահայտված հայոց առասպելական դարբնի կերպարը զուգահեռներ ունի հիմնականում երկու մշակութային միջավայրում՝ հյուսիսկովկասյան (հատկապես կենտրոնական և արևմտյան մասերում) և հնդեվրոպական (բացառությամբ հնդիրանականի): Յնդեվրոպական միջավայրում հատկապես տիպիկ նմանությունների կարելի է հանդիպել սլավոնական, գերմանա-սաքսոնական, հունա-հոմեական և Յուսիսային Կովկասի իրանական ժողովուրդների մեջ, իսկ հյուսիսկովկասյանում՝ արքազա-աղդական դարբնոցային մշակույթում: Առասպելական դարբնի ամենակարևոր հատկանիշներից մեկը՝ դարբնի և արևային հերոսի կապը, հանդիսանում է հաթա-հեթիթական առասպելական դարբին Յասամիլի գլխավոր հատկանիշը:¹⁰⁵ Նկատի ունենալով բերված զուգահեռները, կարելի է, հենվելով նաև տարածաշրջանում երկաթի մշակույթի ծագման վերաբերյալ գիտության մեջ հայտնված կարծիքների վրա, որոշ դատողություններ անել հայոց մեջ երկաթի մշակույթի առաջացման արմատների մասին:

¹⁰⁴ Ըստ մի շարք վկայությունների, միակ մարդը, որ իրավունք ուներ թագավորի ներկայությամբ նստած մնալ, դարբինն էր: Տե՛ս. *Е.Н. Черных*, указ. соч., с. 193:

¹⁰⁵ *В.В. Иванов*, История славянских и балканских названий металлов, с. 92:

Յայկականը դիտելով որպես ինդեվրոպականի դուստր մշակույթ, ըստ երևույթին, պետք է դիտել առաջին հերթին նրա հետ կապի սահմաններում: Ընդհանրապես, գիտության մեջ վաղուց հայտնված և մինչև այժմ էլ իշխող կարծիքն այն է, որ հնդեվրոպացիների երկաթի մշակույթը փոխառյալ է և տեղի է ունեցել հնդեվրոպական էթնոսի տարանջաման ժամանակաշրջանում:¹⁰⁶ Յայոց ծիսաառասպելական դարբնի վերը բերված հատկանիշների հետ զուգահեռներ կարելի է բերել հիմնականում հնդեվրոպական, արևմտահյուսիսկովկասյան և ուգրաֆինական միջավայրից: Յնդեվրոպական միջավայրում հատկապես կարելի է նշել գերմանա-սաքսոնական, սլավոնական, հունա-հոմեական, օսական և սկյութա-սարմատական համապատասխան մշակութային շերտերը: Նշված էթնիկ միջավայրերում նկատելի է դարբնոցային ծեսի կարևորագույն տարրի՝ ծիսական կոանահարության իմաստավորման ընդհանրությունը: Դրա շնորհիվ դարբնի ծիսա-առասպելական կերպարը բնորոշվում է երկնային պատկանելությամբ, արեգակնային, ամպրոպային հատկանիշներով և արարչագործության համամասնակցությամբ:

Նման գծերով կարելի է բնորոշել նաև մերձսևծովյան Կովկասի վրացական, արքազա-աղդական էթնիկ տարրի և ուգրաֆինական ժողովուրդների դարբնի ծիսա-առասպելական կերպարը: Նշված միջավայրերը հայկականի հետ համապատասխանում են ոչ թե այս կամ այն առանձին դրսևորմամբ, ինչպես պարսկականը կամ հնդկականը, այլ դարբնի կերպարի ամբողջական համալիրով, սոցիալական գործառնությով և դարբնության սրբազանության ատրիբուտներով: Եթե վերը բերված գլուխներում բացահայտված դարբնի կերպարին բնորոշ գծերը փորձենք ներկայացնել համալիր ձևով, ապա կարելի է ընդծգել հետևյալ հատկանիշները,

ա) արևային, որի ներքո հասկանում ենք արևի հետ դարբնի ծիսական կերպարի վերը բացահայտված հատկանիշները,

¹⁰⁶ *О. Шрадер*, указ. соч., с. 233. *Н.И. Иванов*, Первобытная история индоевропейцев на основании данных сравнительного языкознания д-ра Шрадера, с. 9:

բ) ամպրոպամարտիկի հատկանիշներ,
գ) ամպրոպսամարտիկի օգնականի և գեներալ պատրաստողի հատկանիշներ,
դ) պատկանելությունը երկնային միջավայրին,

ե) լուսատուների արարում:

Նշված բոլոր կետերի մեջ գերակշռող կարելի է համարել *ա* կետը, քանի որ մնացած բոլորը պայմանավորված է դրանով: Ըստ այդ գերակշիռ մոտիվի, դարբնի կերպարը մոտ է հաթա-հեթիթական Հասամիլ դարբնին¹⁰⁷:

Դարբինն ըստ սոցիալական կարգավիճակի և սրբազանության հատկանիշի, ինչպես վերը տեսանք, նույնպես ընդհանրական է նշված հանրությունների միջև (դարբին-թագավոր, դարբին-կախարհ (մոգ), դարբին-համայնքի պատվավոր և սրբազան անձ):

Նշված գուգահեռները խոսում են այդ ժողովուրդների միջավայրում դարբնությունը կամ մեկը մյուսից, կամ մեկ ընդհանուր կենտրոնից ծագած լինելու մասին: Ըստ լեզվաբանական տվյալների, երկաթի մշակույթը նշված ժողովուրդների մեջ ծագում է հաթա-հեթիթական մշակույթից:¹⁰⁸ Հնագիտական տվյալները նույնպես այդ են վկայում:¹⁰⁹ Ըստ առասպելաբանական տվյալների, հնդեվրոպացիները (բացառությամբ հնդիրանական նախնական բարբառների)¹¹⁰ երկաթի մշակույթը պետք է որ փոխառած լինեն մեկ ընդհանուր կենտրոնից: Նպատակ չունենալով առավելություն տալ գիտության մեջ հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին հայտնված որևէ կարծիքի, հիմք ենք ընդունում այն դրույթը, որ սկսած 3-րդ հազարամյակից, հնդեվրոպական շատ ցեղեր բնակվել են հաթա-հեթիթներին

հարևան տարածքներում:¹¹¹ Այստեղ էլ հավանաբար նրանք ծանոթացել են երկնաքարային երկաթին և ստեղծել դրա հետ կապված հավատալիքային համալիրը:¹¹² Լկզբնական շրջանում այն կիրառվել է սրբազան նպատակներով, որին հավանաբար ծանոթ են եղել քրմական դասի առանձին ներկայացուցիչներ: Ավելի ուշ, մոտավորապես երկրորդ հազարամյակի առաջին կեսերին արդեն ծանոթ լինելով երկնաքարային երկաթին և ունենալով դրա հետ կապված որոշակի ծիսաառասպելական պատկերացումներ, հայերը և հաթա-հեթիթական հանրույթին մոտ գտնվող մերձսևծովյան և Հայկական լեռնաշխարհի տարածքներում բնակվող, տարանջատման գործընթացում գտնվող հնդեվրոպական մյուս ցեղերը հեթիթներից փոխառել են երկաթի մշակման գաղտնիքները:¹¹³ Պետք է կարծել, որ նույն կենտրոնից երկաթի մշակույթին ծանոթացած քարթվելական և աբխազա-ադրաբական էթնիկ խմբավորումների և հնդեվրոպական ցեղերի միջև երկաթագործության բնագավառում տեղի է ունեցել ակտիվ հաղորդակցություն թե Անդրկովկասում և թե Հյուսիսային Կովկասում:

Եթե ընդունենք հույների, որպես հնդեվրոպական տարրի մասին արտահայտված վերջին կարծիքները, ապա կարելի է ասել, որ նրանց հավատալիքային համալիրում երկնային երկաթի պատկերացումները ձևավորվել են մինչև հնդեվրոպական ընդհանրությունից անջատվելը: Հետագայում հեթիթներից հանքային երկաթի մշակումը փոխառելուց հետո,

¹⁰⁷ Այդ մասին տե՛ս. *В.В. Иванов*, История славянских и балканских названий металлов, с. 92. *В.Н. Топоров*, Хетт-Аув. "Катгусера" мифологический образ. - Древняя Анатолия, 1985, с. 111:

¹⁰⁸ Տե՛ս. *В. В. Иванов*, указ. соч., с. 99:

¹⁰⁹ *В.В. Иванов*, История славянских и балканских названий металлов, с. 89, 108: *Г.Г. Гуоргадзе*, Производство и применение железа в Центральной Анатолии по данным хеттских клинописных текстов. - Древний Восток: этнокультурные связи, М., 1988, сс. 238-263:

¹¹⁰ Այդ ժողովուրդների մշակութային և լեզվական տվյալները ցույց են տալիս, որ նրանց անջատումը հնդեվրոպական ընդհանրությունից նախորդել է վերջինիս ծանոթացմանը երկաթի մշակույթին:

¹¹¹ *Е.Н. Черных*, Циркумпонтийская провинция и древнейшие индоевропейцы: Древний Восток: этнокультурные связи, М., 1988, с. 51: *Т. В. Гамкрелидзе*, *В. В. Иванов*, указ. соч., т. 2, с. 890:

¹¹² Երկաթե ամենաին գտածոները, որոնք թվագրվում են մթա 4-3 հազարամյակներից, պատրաստված են եղել մետեորիտային երկաթից և ունեցել են սրբազան գործառույթ տե՛ս *Г. Арешян*, Первые железные изделия Ближнего Востока и балканского полуострова. - Лրաբեր հասարակական գիտությունների, 1975, թիվ 2, էջ 99: *Его же*, Железо в культуре Древней Передней Азии и бассейна Эгейского моря.-Советская Археология, 1976, թիվ 1, էջ 87-89:

¹¹³ Հայերի մեջ հանքային երկաթի մշակույթի սկիզբ կարելի է համարել մթա 2-րդ հազարամյակի կեսերը տե՛ս *С. Гогинян*, К истории древней металлургии железа в Армении. - ՊԲՀ, 1964, թիվ 3, էջ 229-236; *R. J. Forbes*, *E. J. Dijksterhuis*, op. cit., p. 71:

կրել են լրացումներ: Երրորդ հազարամյակում հայ-հունական ընդհանրությունը և մախաեվրոպական թաղրառները կրող ցեղերը ընկել են նույն տարածաշրջանում¹¹⁴: Հավանաբար սա կարելի է համարել հնդեվրոպական միջավայրում երկնային երկաթի հետ կապված հավատալիքների ընդհանրությունը:

Հյուսիս - մերձսևծովյան միջավայրում նման պատկերացումների և դրանց հետ կապված ծիսական երևույթների տարածումը հավանաբար տեղի է ունեցել քարթվեական միջավայրից, որը չափազանց մոտ է հնդեվրոպականին: Նման փոխառությունը չի թաքցվում նաև

սկյութա-սարմատական և մախաեվրոպական ցեղերի միջոցով, որոնց գաղթը Եվրոպա տեղի է ունեցել հյուսիս-մերձսևծովյան տարածքով¹¹⁵: Դարձնության հետ կապված հնդեվրոպական մշակույթին ընդհանուր ծիսա-առասպելական երևույթների փոխանցողն ուզրաֆինականին, հավանաբար, նույնպես եղել են իրանական ծագում ունեցող այդ ցեղերը:¹¹⁶ Ինչ վերաբերում է մշակութային փոխանակությունն իրականացնողներին, ընդունում ենք այն կարծիքը, ըստ որի դրանք եղել են մետաղագործների մասնագիտական խմբերը:¹¹⁷

¹¹⁴ *Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов*, указ. соч., т. 2, с. 899:

¹¹⁵ *ԱՆՊ*, էջ 918:

¹¹⁶ Նշված ցեղերի գաղթի ճանապարհին սերտ առնչություններ են ունեցել ուզրաֆինական էթնիկ ընդհանրության հետ, որն արտահայտվում է նաև լեզվական փոխառություններում:

¹¹⁷ *Н. Я. Мерперт*, Об этнокультурной ситуации IV-III до н. э. в циркумпонтийской зоне. - Древний Восток, этнокультурные связи, М., 1985, с. 12: